21 ՕԳՈՍՏՈՍ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 142(4994)

Azg Ազգ

ISSN: 1829-1651

Յո՞ երթաս, Մայր գաղութ

Սուրիոյ եւ յատկապէս Հալէպի դէմ շղթայազերծուած այս ահաւոր պատերազմը ահագին աղմուկ բարձրացուց եւ առաս նիւթ հայթայթեց հայրենի լրատուամիջոցներուն, որոնցմէ շատերու մօտ հալեպահայ գաղութի վիճակի մասին ստցաւ մտահոգութենէ աւելի, լուր որսալու ու սփռելու մրցակցութեան մէջ մտնելով «գործը» յաջող կատարելու եւ աւելի թիւով ունկնդիր-ակնդիրներ գրաւելու ջանասիրութիւն մը նկատել է ընդհանրապէս:

Եւ այս վազքին մէջ յօնք շինելու փոխարէն, աչք հանելու երեւոյթներ ալ պարզուեցան դժբախտաբար, մասնաւորապէս երբ զրուցավարներ պատահական մարդոց դիմեցին իրենց հարցումներով:

Հալէպը, որ ամբողջ 15 ամիս դիմացաւ սադրանքներուն, լարուած ծուղակներուն մէջ չիյնալու համար, վերջապէս հրդեհը հոն ալ հասաւ, ի մասնաւորի սահմանակից Թուրքիոյ ջանքերով:

Աղէտէն բաւական հեռու մնացած Հալէպը, մէկ օրէն-միւսը դարձաւ կիզակէտ, որակուեցաւ «բանալի» քաղաք ամբողջ տարածաշրջանի ճակատագիրը որոշող: Հալէպի մէջ յաղթողը ինք պիտի որոշէ ոչ միայն Սուրիոյ, այլեւ ամբողջ Միջին Արեւելքի ճակատագիրը...

Սակայն, քաղաքական վերլուծումները ձգելով աւելի հասու քաղաքական մեկնաբաններուն, անդրադառնանք մեր Մայր Գաղութի կացութեան:

Յետադարձ հայեացքով մը մարդ հարց կու տայ՝ «Այս քանիերորդ հայահոծ ու կենսունակ գաղութն է, որ ցնցումի կ՚ենթարկուի ու չիք դառնալու վիհի եզրին կը հասնի: Պոլիսը գնաց, Թիֆլիսը՝ նոյնպէս. Թեհրանն ու Պէյրութն ալ նոյն ճակատագրին ենթարկուեցան: Հերթը Հալէպի՞նն է...

Չեմ ուզեր ենթադրել, որ կազմակերպուած հարուածներ տրուած էին արտերկրի մեր գաղութներուն (թէեւ, որոշ շրջաններու պարագային, անտեղի չէ այդ կասկածը...), սակայն, ինչպէս առածը կ՚ըսէ՝ «Ձին ու ջորին կռուած ատեն, էշը ոտքի տակ կ՚երթայ»: Այդպէս ալ, ազգմիջեան թէ քաղաքացիական պատերազմներու ու կռիւներու ատեն փոքրամասնութիւններ զոհ կ՚երթան, նոյնիսկ, եթէ «դրական չեզոքութիւն» պահեն, ինչպէս պատահեցաւ Լիբանանի պարագային. աւելի քան քառորդ միլիոնոց գաղութը, սփիւռքահայութեան ազգային թէ մշակութային մայրաքաղաքը, տարանջատուեցաւ ու վերածուեցաւ մօտ յիսուն հազարոց փոքր գաղութի, որ տարիներէ ի վեր կը փորձէ վերականգնել իր անցեալի փառքը, սակայն՝ ապարդիւն:

Տես էջ 2

Ազգովին ձեռք մեկնենք սիրիահայությանը

Ռամկավար ազատական կուսակցության նախկին ղեկավար անդամներից **Փանոս Թիթիզյանը** (Լոս Անջելես), անդրադառնալով սիրիահայ համայնքին մեկ միլիոն ամերիկյան դոլարի շտաբ օժանդակություն տրամադրելու ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչության որոշմանը (տես «**Ազգի**» օգոստոսի 15-ի համարը), թերթին ուղղված անգլերեն շրջաբերականում գրում է, որ հայ ժողովուրդը ոչ միայն հավերժ երախտապարտ է արաբ ժողովրդին եւ արաբական երկրներին (հատկապես Սիրիային եւ սիրիացիներին), իրենց ուրերն ու դռները սիրահոժար բացելու ցեղասպանությունից մազապուրծ հայ գաղթականների առաջ եւ բարենպաստ պայմաններ ստեղծելու իրենց աղորուսը վաստակելու եւ գոյատեւելու համար, այլեւ իր անսակարկ զորակցությունն է հայտնում Սիրիայում ստեղծված քաղաքական տագնապալի իրավիճակի առիթով՝ մաղթելով, որ կողմերի միջեւ ընդունելի լուծում գտնվի եւ խաղաղությունն ու անդորրը վերահաստատվեն երկրում:

Այդ կապակցությամբ խրախուսիչ եւ մխիթարական համարելով ՀԲԸՄ-ի նախաձեռնությունը, որը շարունակությունն է երկարամյա բարեգործական գործունեության բոլոր բնագավառներում, Թիթիզյանը ասում է, որ անհրաժեշտ է ՀԲԸՄ-ին մենակ չթողնել եւ ազգովին ձեռք մեկնել սիրիահայությանը, քանի որ սիրիահայերի ցավը մեր բոլորի ցավն է, եւ մենք, անկախ քաղաքական, կրոնական եւ հասարակական այլ կառույցների անհատական թե խմբակային համոզմունքներից, պարտավոր ենք սփյուռքի ամենաամուր եւ ամենակայուն միջնաբերդերից մեկին սպառնացող համահայկական բնույթի մարտահրավերներին պատասխանել ձեռք ձեռքի տված, համահայկական ներուժով, յուրաքանչյուրս իր կարելիությունների սահմաններում: Հ. Ծ.

Իրանի երկրաշարժի հետցնցումները վտանգավոր չեն

Հայաստանը երկրաշարժից տուժած հարեւան Իրանին տրամադրել է 57 մլն դրամի մարդասիրական օգնություն՝ 26 հազար տուփ պահածոներ, 40 հազար լիտր խմելու ջուր, 81 վրան, 1000 ծածկոց, 6000 սավան, 300 ներքնակ, 460 քնապարկ եւ 100 բացովի մահճակալ: Այս մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց արտակարգ իրավիճակների նախարարության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանի տարածքում առաջիկայում ստեղծելու հումանիտար տարածաշրջանային կենտրոն: Աշխատանքներ են տարվում նաեւ Գառնիում տեղակայված սեյսմիկ կենտրոնը զարգացնելու ուղղությամբ: Ա. Մ.

Պայթյուն՝ Ղազիայնթաբում

Սիրիական սահմանին մոտիկ թուրքական Ղազիայնթաբում (հայկական Այնթաբ քաղաքը) երեկ գիշեր հզոր պայթյուն է որոտացել: Հենց քաղաքի ոստիկանատան առաջ կայանած ականված ավտոմեքենայի պայթյունից զոհվել է 8 մարդ, 16-ը՝ վիրավորվել, այդ թվում՝ ոստիկաններ: Այնթաբի բնակչության մեծ մասը քուրդ է:

Մարդ է սպանել նաեւ Օգյուն Սամասթի հորեղբոր որդին

Սակայն սպանվածը հայ չէ, ուստի սպանողը Թուրքիայում փառաբանման չի արժանանա

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Սպանությունները Թուրքիայում սովորական երեւույթ են: Դա թերեւս պայմանավորված է բռնության նկատմամբ թուրք հասարակության մեջ առկա պաշտամունքով: Առավել եւս սովորական պետք է համարվի կանանց սպանությունը, որոնք զոհ են դառնում ներկա կամ նախկին ամուսնու, սիրեկանի, հոր եւ հատկապես կրտսեր եղբոր, որպեսզի վերջինի անչափահասությունը որպես մեղմացուցիչ հանգամանք անդրադառնա դատավճռի վրա: Այսինքն եթե ընտանիքը որոշում է վերջ տալ դստեր կյանքին, ապա ուսենալու դեպքում դա հանձնարարվում է զոհի անչափահաս եղբորը:

Ի դեպ, մեր հայրենակից Հրանտ Դինքի սպանությունը Օգյուն Սամասթ կոչված մարդասպան սահակին հանձնարարելիս պատվիրատուները նույնպես հաշվի էին առել շատ փառապանծ թուրք ազգի այս հերոս զավակի անչափահասությունը: Համենայն դեպս, սովորականի պես, յուրաքանչյուր 48 ժամում մեկ կին է սպանվում Թուրքիայում: Այս տարի անցած 6 ամիսներին սպանված կանանց թիվը գերազանցում է 2011-ին կատարված սպանությունների ընդհանուր թվին:

Անկախ էթնիկ ծագումից, Հայաստանում հայի ազգանունով թուրք-ադրբեջանական քարոզչություն ծավալող հայատյաց պնակալեզ տականքների ինքնասիրությունը չվիրավորելու համար ասենք, որ Թուրքիայում կանանց սպանության մասին տվյալները մերը չեն: Դրանք երեկվա համարում հրապարակել է թուրքական «Վաթան» թերթը:

Թուրքական է նաեւ ինտերնետային «Հաբերթուրք» թերթը, որը նույն օրվա համարում անդրադարձել է համեմատաբար անսովոր մի սպանության: Դա տեղի է ունեցել վարչական տարածքով Սամբուլին սահմանակից Թեքիրդաղի նահանգային կենտրոնում: Ինչո՞ւ անսովոր: Այն պարզ պատճառով, որ սպանությունը իրականացվել է Թեքիրդաղ քաղաքի՝ տարիզոնցիներով բնակեցված «Կարաղենիզ» թաղամասի մզկիթի բակում, Ռամադանի տոներին նախորդող վերջին նամազից հետո:

Սպանության զոհը ոմն Մուրադ Սերդարն է, 32 տարեկան: Նամազից հետո նա մզկիթից դուրս է եկել բակ, որտեղ տոնի առթիվ ծանոթներին շնորհավորելիս՝ նրա գլխին է դիպել պատահաբար արձակված փամփուշտն ու տեղն ու տեղը մահացել է: Գնդակն արձակող Թուրհան Սամասթն արդեն որոշակի ծանոթ պետք է լինի մեզ, որովհետեւ Հրանտ Դինքին սպանող Օգյուն Սամասթի հորեղբոր որդին է:

Տես էջ 8

Դավութօղլուն Սիրիայում միջամտության կոչ է անում ՄԱԿ-ին

Թուրքիայի արտգործնախարարն այդ կոչն արել է երեկ Կոնիայում՝ ընդունելով PKK-ի հետ կռիվներում վիրավորված զինծառայողներին եւ զոհվածների հարազատներին: Նա միաժամանակ պատասխանել է լրագրողների հարցերին: Թուրքիայում աղասանած սիրիացիներին առնչվող հարցին ի պատասխան Դավութօղլուն, Դունիաբուլթենի կայքէջի վկայությամբ, ասել է. «Երբ փախստականների թիվը հասնի 100 հազարի, ապա խնդրո առարկա կդառնա զանգվածային արտագաղթը: Դա ինքնին մարդկային աղետ է, մենք միշտ կօգնենք սիրիացի եղբայրներին, սակայն իրավիճակը երկրում աղետի է վերածվում: Այս հարցը բարձրացնելու ենք ՄԱԿ-ի առաջիկա Գլխավոր ասամբլեայում: Սիրայում տիրող իրավիճակն այլեւս ներին խնդիր չէ, սպառնում է հարեւան երկրներին: Ակնկալում ենք, որ ՄԱԿ-ը միջամտի զարգացումներին: Չմիջամտելու դեպքում ՄԱԿ-ը կկորցնի գոյության իմաստն ու իր առաքելությունը»: Հ. Ջ.

Հիվանդացել է Բեյրութում առեւանգված երկու թուրքերից մեկը

Չնայած Լիբանանում Թուրքիայի դեսպանության եւ արտգործնախարար Դավութօղլուի ջանքերին, լիբանանյան Միկդադ խմբավորումը հրաժարվում է ազատ արձակել առեւանգված Թուրքիայի քաղաքացիներին, որոնցից Այդըն Թուֆան Թեքինը նախորդ օրը հիվանդացել է եւ բուժօգնություն է ստանում: Այդ մասին երեկ, վկայակոչելով «Դեյլի սթար» թերթին, նշել է Դունիաբուլթենի կայքէջը: Այդ ընթացքում Թուրքիայի արտգործնախարարությունը զգուշացրել է երկրի քաղաքացիներին. «Առանց խիստ անհրաժեշտության Լիբանան չմեկնել»: Ի դեպ, Միկդադը հայտարարել է, որ շարունակելու է Թուրքիայի քաղաքացիների առեւանգումը: Հ. Ջ.

Հասարակության մեջ ագրեսիա կա, այդ թվում՝ լրատվամիջոցներում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կա արդյո՞ք ագրեսիվ լրագրություն, ի՞նչ բան է դա, եւ ի՞նչ հետեւանքների է բերում: Ահա այս հարցադրումն էին ընտրել Հ1-ի «Ազատ գոտի» հաղորդման կազմակերպիչները եւ մի խումբ լրագրողների հետ փորձում էին դա պարզել: Տեսագրություն էր, այնպես որ այսօր-վաղը ցույց կտան, սակայն այդպիսի ֆորմատով, երբ բավական մեծ խումբ մարդկանցով ես արծարծում նման ցավոտ հարց, ամբողջական տեսակետներ հնարավոր չէ ձեւավորել: Թող լինի, որ ես ակամա գովազդեցի այդ հաղորդումը, սակայն հարցի շուրջը, ինչպես նաեւ այն մասին՝ կա՞ այդպիսի երեւույթ, ագրեսիվ լրագրություն, դիտարկենք վերլուծաբար, ինչը հնարավոր չէ անել իմ կարծիքով այդ կարգի (կես-ժամանոց) սուղ հաղորդաժամի մեջ:

Նախ ասեմ, որ ի սկզբանե որակումը որպես այդպիսին չեմ ընդունում՝ ագրեսիվ լրագրություն, որպես այդպիսին չկա, կա պրոֆեսիա, հարգանք պրոֆեսիայի նկատմամբ, գրված ու չգրված կանոնների պահպանում, իսկ այդ բոլորից առաջ, զուգահեռ եւ հետո՝ մասնագիտության լիարժեք տիրապետում: Ապրելու կռվում, երբ ամեն օր լրատվամիջոցները սնվում են գոյատեւման եւ ասպարեզը չզիջելու խնդիր լուծել, հնարավոր է հաճախ անցնել սահմանը, եւ դա անում են՝ մեկը մի փոքր, մեկն ամեն սահման մոռացած՝ նայած լրագրողական խղճին ու մասնագիտության տիրապետման աստիճանին: Արդար լինելու համար ասենք, որ միայն լրագրության մեջ չէ այդպես, մեր ողջ հասարակությունն ու մարդկային կյանքի ամենատարբեր ոլորտները ներծծված են խաղի կանոնները պահել չուզենալու կամ չկարողանալու հիվանդությամբ, ու միայն լրագրողից պահանջել մի բան, որ ողջ հասարակությունում չկա, առնվազն տարօրինակ է: Ասենք՝ եթե պատգամավորը «ընտրվում է» հայտնի մեթոդներով՝ այն է փող բաժանելով, վերեւից իջեցված քվոտայով, եթե նույն ընտրողը սպասում է նրա 5 կամ 10 հազար դրամին՝ սա կարծես թե այսպես կոչված «ագրեսիվ լրագրության» հետ կապ չունի, սակայն այդ դեպքում նման պատգամավորը կամ ընտրողը ինչո՞ւ եւ ի՞նչ իրավունքով հարգանք պահանջի լրագրողից:

Տես էջ 3

Համայնքի յուրաքանչյուր անդամ պետք է դառնա Հայաստանի դեսպանը

Նման հորդորանքով է եզրափակել Սիդնեյում՝ Կոխ Ռոուդի համայնքային դահլիճում (Հյուսիսային Ռայդ) հայ համայնքի հարյուրավոր անդամների հետ ունեցած հանդիպման իր ելույթը Հայաստանի արտաքին գործերի նախարար **Էդվարդ Նալբանդյանը**, որ պաշտոնական հրավերով Ավստրալիայում էր օգոստոսի 11-13-ը:

Ի լրացումն «**Ազգ**»-ի օգոստոսի 17-ի լրատվության՝ Ավստրալիայի ՌԱԿ Հայ իրավանց խորհրդի ատենապետ **Հակոբ Չամբերթենյանը** տեղեկացնում է, որ օգոստոսի 12-ի այդ հանդիպմանը Հայաստանի հարգարժան նախարարին դիմավորել են Ռայդի քաղաքապետ Արթին Էմմեթյանը, խորհրդական Սարգիս Եղելյանը եւ համայնքային հարաբերությանց պետական հանձնաժողովի ատենապետ Ստեփան Գրիգորյանը: Ներկա են եղել ինչպես երեք ավանդական հայկական կուսակցությունների, այնպես էլ հոգեւոր դասի, Բարեգործականի, մամուլի եւ այլ մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

«Հաշվի առնելով, որ 2008-ին արտգործնախարարի պաշտոնն ստանձնելուց հետո սա առաջին այցելությունն էր, հետաքրքրությունը չափազանց մեծ էր, հուզումը՝ անչափելի», գրում է **Հակոբ Չամբերթենյանը** եւ ավելացնում, որ ավելի քան 45 րոպե տեւած համապարփակ ելույթի ընթացքում Նալբանդյանը հստակորեն ներկայացրել է Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական դրույթները՝ ինչպես ղարաբաղյան հակամարտության, այնպես էլ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի եւ Իրանի հետ Հայաստանի հարաբերությունների վերաբերյալ, ընդգծելով, որ Ռուսաստանի հետ համագործակցությունը լիովին երաշխավորում է մեր տարածքային ամբողջականությունը ընդդեմ ամեն մի օտար սպառնալիքի:

«Հայաստանը նախահարձակ չի լինի, բայց Ադրբեջանի կողմից որեւէ ոտնձգության դեպքում մենք համապատասխան հակահարված կհասցնենք», ասել է Նալբանդյանը:

Հայ-թուրքական արձանագրությունների եւ ընդհանրապես հարաբերությունների մասին խոսելիս նախարարը վերահաստատել է առանց նախապայմանների Հայաստանի դիրքորոշումը եւ հիշեցրել, որ նույնիսկ ԱՄՆ-ի պետքարտուղարի բնորոշմամբ գնդակն այժմ գտնվում է Թուրքիայի դաշտում: Հույս հայտնելով, որ մի օր կհաստատվեն դիվանագիտական հարաբերություններ Թուրքիայի հետ եւ սահմանը կբացվի՝ հեշտացնելու համար առեւտուրը երկու երկրների միջեւ, նա նշել է, որ Թուրքիայում դանդաղ տեղաշարժ կա, եւ դրա ապացույց այն ցույցերն են, որոնք տեղի ունեցան այս տարի ապրիլի 24-ին՝ ցեղասպանության հիշատակի օրը:

Նախարարության ներկայիս առաջնահերթություններից Նալբանդյանը առանձնացրել է Հարավային Ամերիկայի եւ արաբական աշխարհի հետ հարաբերությունների զարգացումը:

«Հայաստանի արտգործնախարարի ելույթը խիստ հագեցած էր եւ բարձր դիվանագիտական պրոֆեսիոնալիզմով առլեցուն, սակայն ափսոս, որ փիչ ժամանակ էր հատկացված հարց ու պատասխանի բաժնին», եզրակացնում է Հակոբ Չամբերթենյանը՝ հույս հայտնելով, որ հետագայում այլ հնարավորություններ եւս կլինեն: Հ. Ծ.

ՄԱՍԱՉՈՒՍԵԹՍ

Վախճանվել է ՆԱԱՍՐ-ի հիմնադիր Մանուկ Յանգը

Բելմոնտում (Մասաչուսեթս) 94 տարեկանում վախճանվել է Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի՝ ՆԱԱՍՐ-ի հիմնադիր եւ մինչեւ 2001 թվականը գործող նախագահ Մանուկ Սողոմոնի Յանգը

«Ամերիկայում Հայկական ուսումնասիրությունների շարժման հայրը» հորջորջված Յանգը ծնվել էր Բոստոնում, խարբերդցի Մալեմեզյան-Յանգ ընտանիքում, որ ԱՄՆ էր գաղթել 1915-ի Եղեռնից մի փոքր առաջ: Բարձրագույն կրթությունը ստացել էր Նորթիսթրն (բակալավր) եւ Կլարք (մագիստրոս) համալսարաններում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայել էր Եվրոպայում՝ ամերիկյան 8-րդ եւ 9-րդ ռազմաօդային ուժերում: Ֆիզիկա եւ

մաթեմատիկա էր դասավանդել Մասաչուսեթսի համալսարանում, միջազգային հարաբերություններ՝ Նորթիսթրն համալսարանում, իսկ պատմություն եւ կառավարում՝ Բրուքլինի ավագ դպրոցում: Որպես խմբագրի օգնական աշխատակցել էր «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթին: 1950-ականների կեսերին հիմնադիրներից էր եղել Ամերիկայում Հայկական ուսումնասիրությունների մշտական կենտրոնի՝ ՆԱԱՍՐ-ի, որից 4 տարի անց՝ 1959-ին բացվել է առաջին հայագիտական ամբիոնը Հարվարդի համալսարանում: Իր ազգասիրական ծառայությունների համար Յանգը արժանացել էր բազմաթիվ պարգեւների, այդ թվում՝ «Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանի Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից:

Հ. Ծ.

ԳՅՈՒՄՐԻ

Էներգիա՝ ջրաոտույտի տեխնոլոգիայով

Գյուղի ներդրման համար պետական աջակցություն է ակնկալվում

Գյումրեցի Ռաֆիկ եւ Ռոլանդ Մուրադյան եղբայրները ստեղծել են ջրաոտույտի տեխնոլոգիայով աշխատող փոքր հիդրոէլեկտրակայանի մանրակերտ, որը, գյուղատնտեսական մշակաբույսերի հավաստմամբ, թույլ է տալիս անհամեմատ արդյունավետ օգտագործել էներգաղբյուրները՝ մի քանի անգամ ավելացնելով ջրային ռեսուրսներից ստացվող էներգիան: Ջրի հոսքի էներգիան մեխանիկական կամ էլեկտրական էներգիայի վերափոխող իրենց յուրօրինակ սարքավորումը եղբայրներն օրերս ներկայացրել են քաղաքի լրագրողներին:

Փոքր հիդրոէլեկտրակայանի առանձնահատկությունը, ինչպես նշում է ճարտարագետ Ռաֆիկ Մուրադյանը, այն է, որ փիչ միջոցներով հնարավոր է արտադրել մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա: Եղբայրների առաջարկած սարքի օգտագործման դեպքում, որը նրանք մանրակրկիտ մշակել են 5 տարվա ընթացքում, գետերի հուների վրա ամբարտակների եւ խողովակաշարերի կառուցման անհրաժեշտություն չի առաջանում: «Ջրաոտույտի տեխնոլոգիա» համակարգում ջրի ինքնակազմակերպման հաշվին ստեղծվում է ծավալային շարժվող զանգված՝ մեծ ուժի ջրաոտույտ, որի էներգիան տասնյակ անգամ գերազանցում է գոյություն ունեցող տեխնոլոգիաներով ստացվող էներգիան: Առաջարկվող սարքավորումը մեծ քանակությամբ կարող է կիրառվել գետի, համապատասխան ջրաքանակ ունեցող ջրահոսքի վրա, ապահովելով էներգետիկ ռեսուրսների բազմակի օգտագործում: Ջրաոտույտի եղանակով աշխատող նոր հիդրոէլեկտրակայաններ կառուցելուց բացի ցանկության դեպքում հնարավոր է նաեւ վերակառուցել յուրաքանչյուր գործող հէկ, որի ընթացքում վերջինս կշարունակի աշխատել, միայն՝ մի փոքր պակաս հզորությամբ:

Հեղինակների համոզմամբ, այս գյուղը հաստատես նավթ եւ գազ չունեցող մեր երկրի համար մեծ ռազմավարական նշանակություն կարող է ունենալ, ուստի իրենք նպատակ ունեն սարքավորումը նախ կիրառված տեսնել Հայաստանում, ապա նաեւ հանել միջազգային շուկա: Անհրաժեշտ ֆինանսական ներդրումների համար Մուրադյաններն ակնկալում են պետական աջակցություն: Այն ստանալու նպատակով Ռաֆիկ Մուրադյանն օրեր առաջ բաց նամակ է հղել ՀՀ նախագահին եւ վարչապետին՝ հարցը ներկայացնելով նրանց ուշադրությանն ու խնդրելով հանձնարարել ոլորտի պատասխանատուներին՝ ուսումնասիրել առաջարկությունը եւ խնդրին գործնական մոտեցում ցուցաբերել: Ակնկալվում է պետության ֆինանսական ներգրավվածությունը ստեղծված ընկերության բաժնետոմսերի դիմաց, անհրաժեշտության դեպքում անտոկոս երկարաժամկետ վարկերի տրամադրում, ինչպես նաեւ պետական աջակցություն միջազգային շուկա մուտք գործելու հարցում:

Գ. Մ.

ՄՏԱՇՈԳՈՒԹՅՈՒՆ

Յո՞ երթաս, Մայր գաղութ

1-ին էջից

Մնացած էր Հալէպը, Պէյրութի կողին հազուագիւտ հայախօս ու հայատրոփ գաղութներէն մէկը, եւ ահա՛ ան ալ զարնուեցաւ:

Բացի Լիբանանէն, ոչ մէկ արաբական երկրի մէջ հայերը այնքան ապահով չեն զգացած իրենք զիրենք, որքան Սուրիոյ մէջ, որքան Հալէպի մէջ:

Մեր տասնեակ մը եկեղեցիները, դպրոցները, ակումբները գործած են անխափան, մեր մշակութային, թէ այլ ձեռնարկները յաճախ գերակշռած են քաղաքի ընդհանուր ձեռնարկները, նոյնիսկ օրէնքը շրջանցելով, յաճախ մենք մեր թմբուկը զարկած ենք մեր լեզուով, երբեմն միմիայն մեր լեզուով, ու մարդիկ ներողամիտ գտնուած են: Այսօր մշակութային կեանքը լրիւ ջլատուած է:

Ոչ մէկ ատեն չենք զգացած, որ մենք երկրորդական կարգի քաղաքացիներ ենք, միշտ յարգուած, միշտ սիրուած ու շփացուած:

Ու յանկարծ, միջազգային սրիկայութեան եւ անոր գործիքներուն շղթայազերծած աննախադէպ պատերազմ... որուն ոչ դրդապատճառը հասկցանք, ոչ ալ ծրագրին հեռանկարը հասանելի է մեր ուղեղին, եթէ շրջանցենք ապատեղեկատուութեանց մշուշապատը ու փորձենք գտնել իրականութիւնը:

Հալէպը, որ Սփիւռքի հայերէն բաբախող սիրտը կը նկատուի, ցոյց տուաւ իր ասպնջականութիւնը թէ՛ Լիբանանի պատերազմի օրերուն եւ թէ Հայաստանի երկրաշարժին, ինչով որ կրնար, առանց երկմտելու, առանց սակարկելու:

Այսօր Հալէպն է վիրաւորը եւ օգնութեան կարօտը:

Հայաստանի Հանրապետութեան Հալէպի գլխաւոր հիւպատոսութեան, երեք համայնքապետերու եւ անխտիր բոլոր հայկական կազմակերպութեանց ու միութեանց մասնակցութեամբ, առաջին օրէն իսկ, հանդիպումներ ու ժողովներ գումարուեցան, կազմուեցաւ կեդրոնական մարմին մը, ապա շտապ օգնութեան գործադիր մարմին մը, յանձնախումբեր ու ենթայանձնախումբեր, մէջտեղ եկաւ հիմնադրամ մը ու ձեռնարկուեցան սննդեղէնի, առողջապահական հարցերու, դեղօրայքի եւ ապաստանարաններու կազմակերպման ու տնօրինման, շտապ օգնութեան նախապատրաստական աշխատանքներ:

Հ.Բ.Ը. Միութիւնն ալ իր մեծութեան վայել, իսկայ գումարով մը օժանդակութիւն փութացուց:

Թէեւ առայժմ կացութիւնը այնքան ալ սուր ու ողբերգական չէ հայերու պարագային, թէեւ հայահոծ թաղամասերը համեմատաբար աւելի ապահով շրջաններու մէջ են, սակայն լաւ է կանխօրոք պատրաստուիլ ու յետոյ անձար չմնալ: Ակումբները մեղուաջան աշխատանքի լծուած են:

Հայ տղաք նոյնիսկ ինքնակամ մտած են քաղաքօրի մէջ ու զէնք ի ձեռին կը պաշտպանեն հայկական թաղամասերը: Զոհուողներ ալ եղան. նոյնիսկ պարզ քաղաքացիներ շեղած փամփուշտի մը, կամ ռումբի բեկորի մը թիրախ դարձան: Տունէն դուրս գալը դարձած է վտանգաւոր, իսկ տան մէջ փակուիլը տանջանք է:

Կեանքը իսկապէս դժուար դարձաւ Հալէպի մէջ: Վառելանիւթ չկայ, ոչ մէկ տեսակի, գործարանները գրեթէ փակ են, պանդոկները լրիւ պարապ, ճաշարանները այցելող չունին, եթէ նոյնիսկ ճաշ եփելու միջոց ունին, գազի ու էլեկտրականութեան յաճախակի բացակայութեան պատճառաւ:

Եռուզեռ չկայ, ինքնաշարժները գամուեր մնացեր են մայթեզրերուն: Չարաշահութիւնը գլուխը առեր գացեր է: Մխսանենգուած կամ պահուած ադրանքները երեւակայական գիներով կը վաճառուին ու այս վիճակը երթալով աւելի կը սրի՝ շնորհիւ իբր թէ Սուրիոյ մէջ դեմոքրասի ու ազատութիւն ներմուծելու համար «պայքարող» պետութիւններուն, որոնց հասցուցած հարուածները իշխանութենէն շատ աւելի՝ ժողովուրդը անդամալուծեցին:

Մարդ չի գիտեր, թէ վաղը ի՞նչ պիտի պատահի: Մտահոգիչ ու տխուր է վիճակը:

Պատկերացուցէք, Երեւան գալու համար, քաղաքէն-օդակայան հասնիլը ռիսկ է, երբ սիրուած ես տարբեր անցարգելներէ ու կողմնակի ճամբաներէ անցնիլ: Իսկ օդանաւի տոմսի արժէքը յաւելեալ աղ-պղպեղ է կոտցացող վէրքին վրայ, մասնաւորաբար Արմաւիրինը:

Այս բոլորին մէջ ի՞նչ կ՚ընէ Հայաստանը:

Բացի Սփիւռքի նախարարութեան կազմակերպած հալեպահայ պատանիներու հանգստեան ծրագիրէն, յիշատակութեան արժանի դեռ բան մը չտեսանք:

Հալէպի մէջ 12-16 տարիքի մէջ եղող գոնէ հինգ հազար պատանի կայ, ասոնցմէ հարիւր-երկուհարիւր հոգի հրաւիրելով ի՞նչ հարց կը լուծուի:

Նոյնիսկ դիմորդներուն Հայաստանի քաղաքացիութեան նոր անցագրերն ու անձնագրերը յանձնելու գրասենեակային դժուարութիւնները չեն հարթուած: Պաշտօնեաները շատ լրջադէմ են, ժպիտ չկայ դէմքերուն, կը զգաս, որ արդէն յոգներ են ու զզուեր «անքաղաքավար» դիմորդներու խօսակցական, թէ ֆիզիկական հոմշտոցներէն:

Թէեւ Մեծի տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը կոչ ըրաւ հալեպահայերուն չլքել Հալէպը, չպարպել գաղութը, նոյնը արձագանգեցին մեր առաջնորդները, սակայն, կարողութիւն ու կարելիութիւն ունեցողը եկած է Հայաստան, ոմանք վերջնական կայք հաստատելու, ոմանք լալ ժամանակաւոր: Բայց մեծամասնութիւն մը կայ, որ տեղէն չի շարժիր, չ՚ուզէր, կամ չի կրնար: Ու Անդրանիկ Ծառուկեանի ըսածին պէս, ոչ գացողը կրնանք քննադատել, ոչ ալ մնացողը ծափահարել:

Շուտով վերամուտն է դպրոցներուն,- եթէ անշուշտ բացուին,- մէկ կողմէ դպրոցը լքող աշակերտներուն ձգելիք բացը, միւս կողմէ տնտեսական տագնապին պատճառաւ մարդոց նիւթական անցուկ վիճակը, շատ լուրջ ու անլուծելի խնդիրներու առջեւ պիտի կանգնեցնեն մեզ:

Այս բոլորէն ետք, կ՚ապաւինինք Աստուածային նախախնամութեան, ապա հայու հաւատքին, համբերութեան ու անկոտրում կամքին:

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հալեպ-Երեւան

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841
060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

7,7 տոկոս տնտեսական ակտիվության աճ տարվա առաջին 7 ամիսներին

Ամենամեծ աճն ունեցել են արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, ըստ պետվիճակագրության

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2012-ի հուլիսի սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմել է 7,2 տոկոս: Հիշեցնենք, որ 2011-ից Ազգային վիճակագրական ծառայությունն անցել է մակրոտնտեսական ցուցանիշների հավաքման, հրապարակման եւ ամփոփման նոր մեթոդի՝ դադարեցվել է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ամսական հաշվարկումը, իսկ որպես տնտեսության վիճակը գնահատող ամսական ցուցանիշ ներկայացվել է տնտեսական ակտիվության ցուցանիշը: Միաժամանակ, նախորդ ամսվա՝ հունիսի նկատմամբ տնտեսական ակտիվության աճը կազմել է 10,3 տոկոս:

Արդյունաբերությունում եւ գյուղատնտեսությունում ամենամեծ աճն է արձանագրվել ինչպես 7 ամիսների, այնպես էլ միայն հուլիս ամսվա ցուցանիշներով: Արդյունաբերությունում հուլիսին անցյալ տարվա հուլիսի համեմատ կազմել է 16 տոկոս, ինչը բավականին բարձր ցուցանիշ է: Այս տարվա հունիսի համեմատ արդյունաբերությունն աճել է 4,8 տոկոսով: Գյուղատնտեսությունը հուլիսին նախորդ տարվա հուլիսի համեմատ աճել է 15,3 տոկոսով, իսկ այս տարվա հունիսի համեմատ՝ 91,8 տոկոսով: Շինարարությունը հուլիսին ունեցել է անկում, սակայն ընդամենը 0,6 տոկոսով, իսկ ահա հունիսի նկատմամբ այդ անկումը կազմել է գրեթե 4 տոկոս: Մանրածախ առեւտրում արձանագրվել է 5,8 տոկոս աճ, իսկ հունիսի նկատմամբ՝ 5,4 տոկոս աճ: Ծառայությունների ոլորտում անցյալ տարվա հուլիսի նկատմամբ 6 տոկոս աճ է արձանագրվել, իսկ այս տարվա հունիսի նկատմամբ՝ 4,3 տոկոս անկում: Էլեկտրաէներգիայի արտադրությունը նվազել է 0,7 տոկոսով, իսկ այս տարվա հունիսի նկատմամբ՝ 0,8 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառությունը 2012-ի հուլիսին 2011-ի հուլիսի նկատմամբ աճել է 6,5 տոկոսով եւ կազմել 436,2 մլն դոլար, իսկ 2012-ի հունիսի նկատմամբ նվազել 5,7 տոկոսով: Արտահանումը կազմել է 117,7 մլն դոլար՝ աճելով 11,1 տոկոսով, իսկ 2012-ի հունիսի նկատմամբ նվազելով՝ 4,1 տոկոսով: Ներմուծումը կազմել է 318,5 մլն դոլար՝ աճելով 4,9 տոկոսով, իսկ 2012-ի հունիսի նկատմամբ նվազելով՝ 6,3 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը կազմել է շուրջ 200 մլն դոլար:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում հուլիսին կազմել է մոտ 120 հազար դրամ, մասնավոր հատվածում կազմել է 143 հազար դրամ, պետականում՝ 100 հազար դրամ:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակել է նաեւ 2012-ի հունվար-հուլիս ամիսների սոցիալ-տնտեսական ցուցանիշները եւ դրանք համադրել 2011-ի հունվար-հուլիսի հետ: Ըստ այդմ, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) 2012-ի հունվար-հունիսին կազմել է 7,7 տոկոս:

Արդյունաբերության աճը հունվար-հուլիսին նախորդ տարվա հունվար-հուլիսի համեմատ կազմել է 13,4 տոկոս, գյուղատնտեսությունում՝ 10,2 տոկոս աճ, էլեկտրաէներգիայի արտադրության աճը՝ 7,6 տոկոս, շինարարությունն ունեցել է 5.2 տոկոս անկում, ծառայությունների ոլորտում արձանագրվել է 11 տոկոս աճ, մանրածախ առեւտրում՝ 2,9 տոկոս աճ:

Արտաքին առեւտրաշրջանառությունը 2012-ի հունվար-հուլիսին 2011-ի հունվար-հուլիսի նկատմամբ ավելացել է 8,1 տոկոսով եւ կազմել մոտ 3 մլրդ 138 մլն դոլար: Արտահանումը կազմել է 802,2 մլն դոլար՝ արձանագրելով 13,1 տոկոս աճ, ներմուծումը կազմել է 2 մլրդ 336 մլն դոլար՝ աճելով 6,4 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը այս տարվա հունվար-հունիսին կազմել է մոտ 1,5 մլրդ դոլար:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Իշխանն ու սիգը՝ ձկնագողերի թիրախում

Բնապահպանների անհանգստությունը եւ «SOS-Սեւան» ահազանգն առաջին հերթին պետք է վերաբերեն ձկնային պաշարներին, քանի որ Սեւանում արդյունագործական ձկնային պաշարներ այլեւս չեն մնացել: Լրագրողների հետ հանդիպման ժամանակ՝ երեկ նման կարծիք հայտնեց ԳԱԱ հիդրոլոգիայի ու կենդանաբանության գիտական կենտրոնի տնօրեն Բարդուխ Գաբրիելյանը:

Կոնկրետ սիգի պաշարները, ըստ նրա, լիովին խզված են, դրանք արդեն այնքան սակավ են, որ այդ տարածումը ինքնավերականգնվել այլեւս չի կարող, խոսքը Սեւանա լճում սիգի վայրի բազմացման մասին է: Ելնելով ստեղծված վիճակից՝ հիդրոլոգիայի ու կենդանաբանության կենտրոնը նախատեսում է առաջարկել, որ սիգի ձկնկիթը ներկրվի Ռուսաստանից, ինչպես արվել է 1920-30-ականներին, ինչը կօգնի վերականգնելու սիգի բազմացումն ու արդյունագործական պաշարները, բայց միայն այն դեպքում, եթե վերացվի որսագողությունը:

Իշխան ձկնատեսակը եւս որսագողերի թիրախում է: Բարդուխ Գաբրիելյանը նշում է, որ 1970-ականներից իշխանը համարվում է արգելված տեսակ, 1978-ից որպես անհետացող տեսակ գրանցվել է Հայաստանի, ապա Խորհրդային Միության Կարմիր գրքում: Վերջին տարիներին բնապահպանության նախարարությունը սկսեց մի ծրագիր, որի շրջանակում Սեւանա լիճ բաց էին թողնվում մանրաձկներ, եւ դրա շնորհիվ իշխանի բազմացումն ինչ-որ չափով վերականգնվեց: Սակայն դարձյալ օգտվում են ձկնագողերը, եւ վերահսկողության պակասի պատճառով պետության ջանքերն ու ծախսած գումարն անցնում են ապարդյուն:

Վերահսկողություն լճի վրա կամ շուկաներում, ըստ Բարդուխ Գաբրիելյանի, ընդհանրապես չկա՝ ոչ ոստիկանության, ոչ էլ համապատասխան կազմակերպությունների կողմից: «Թե ինչո՞ւ չկա՝ մեկնաբանել չեմ ուզում, քանի որ պատճառներն օբյեկտիվ ու սուբյեկտիվ են», ասաց Բարդուխ Գաբրիելյանը՝ եւս մեկ անգամ շեշտելով, որ հիմնականում որսագողությունն ու վերահսկողության բացակայությունն են հանգեցրել արդյունագործական պաշարների վերացմանը Սեւանա լճում. «Նույնիսկ մի անգամ սիգ վաճառողին հարցրել եմ՝ ինչո՞ւ եք վաճառում, չէ՞ որ արգելված է, իսկ նա պատասխանեց՝ լավ եմ անում, գնա, բողոքիր որտեղ ուզում ես»:

Ինչ վերաբերում է Սեւանի ջրի մաքրությանը, եւ դրա ազդեցությանը ձկնատեսակների վրա, մասնագետը նշում է, որ վերջին 2 տարիներին նկատվում է ջրի որակի բարձրացում: «Ու եթե մենք ունենանք բարձրորակ ջուր, ապա կունենանք ավելի արժեքավոր ձկնատեսակներ», հավելում է Բարդուխ Գաբրիելյանը:

Ի. Պ.

Դատարանը մերժեց «Սիվիլիթասի» հարցը

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Մխիթար Պապոյանի նախագահությամբ, մերժեց «Սիվիլիթաս» հիմնադրամի հայցը, որով պահանջվում էր վերացնել Ազգային անվտանգության ծառայության որոշումը, որի հիման վրա «Սիվիլիթաս» հիմնադրամին եւ վերջինիս հիմնադիր Վարդան Օսկանյանին առնչվող քրեական գործ էր հարուցվել: Նիստը տեղի ունեցավ շաբաթ օրը՝ օգոստոսի 18-ին:

«Դժբախտաբար դա սպասված որոշում էր, որը, բնականաբար, կբողոքարկվի բոլոր ատյաններում, մինչեւ Եվրոպական դատարան: Անհիմն մեղադրանքները եւ շինծու պահանջները շեղում են մեր ուշադրությունը, ինչի հետեւանքով խոչընդոտվում եւ ձգձգվում է մեր հիմնադրամի եւ «Սիվիլնեթ» լրատվամիջոցի բնականոն գործունեությունը: Դա, հավանաբար, այս գործընթացի բուն նպատակն է»,- ասել է «Սիվիլիթաս» հիմնադրամի տնօրեն Սալբի Ղազարյանը:

ԱԱԾ քննիչը, դատարանում եզրափակելով իր ցուցմունքը, հայտարարել էր, որ ԱԱԾ-ն նախաքննությունը իրականացնում է նաեւ հենց հիմնադրամի շահերը պաշտպանելու նպատակով: Արձագանքելով այս հայտարարությանը՝ Սալբի Ղազարյանն ասել է. «Դա ոչ միայն անհասկանալի է, այլեւ անընդունելի է եւ խախտում է բոլոր տեսակի հասարակական կազմակերպությունների ազատությունները: Ինչպե՞ս կարող է որեւէ կառավարական կառույց ինքնուրույն որոշել, որ որեւէ հասարակական կազմակերպության իրավունքները ոտնահարվել են եւ ըստ այդմ նախաձեռնություն վերցնել պաշտպանելու այդ իրավունքները: «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը հստակ նշում է, որ կազմակերպությունը կառավարվում է իր մարմինների միջոցով, որոնք գործում են օրենքին եւ կազմակերպության կանոնադրությանը համապատասխան: Օրենքը չի նախատեսում, որ հասարակական կազմակերպությունները պետք է կառավարվեն որեւէ պետական կառույցի, այդ թվում՝ ԱԱԾ-ի կողմից»,- ասել է Սալբի Ղազարյանը:

Ազգային անվտանգության ծառայության որոշումը վերացնելու դատական հայց ներկայացրել էր նաեւ «Սիվիլիթասի» հիմնադիր Վարդան Օսկանյանի ներկայացուցիչը, ինչը նույնպես մերժում է ստացել: Այդ որոշումը նա կբողոքարկի:

Հասարակության մեջ ագրեսիա կա, այդ թվում՝ լրատվամիջոցներում

1-ին էջից

Եթե մեր իրավական համակարգում, չնայած երկրի նախագահի պարբերաբար հնչող պահանջներին, շարունակում են խան տարի առաջ անցյալի գիրկն անցած սովետական կարգերը եւ դրանց հանգույն փողի, տեղական եւ բարձր ռանգի այս կամ այն իշխանավորի քիմքին դուր գալու համար (բնական է՝ ոչ առանց շահագրգռության) շարունակվում են գործեր «թխվել» կամ անարդար դատաքննություններ իրականացվել՝ լրագրողից պահանջվում է հարգանք եւ սե՞ր այդպիսի իրավապահների հանդեպ: Ու ասենք՝ քննադատությունը, որը երբեմն գուցե խախտի էթիկայի կանոնները, բայց համարժեք է այդպիսի գործելակերպին, անվանե՞նք ագրեսիվ լրագրություն:

Նույն կերպ «ոչ ագրեսիվ» լրագրություն է պահանջվում մականունավոր, հայերենի հերն ամեն օր անիծող, անվերջ «խորհրդակցություններով» իրենց ժողովրդից կիլոմետրերով հեռու պահող, պարտականությունների նվազագույնը կատարելը հասարակ մարդու հանդեպ բարեգործություն համարող պաշտոնյաների նկատմամբ. ի՞նչ իրավունքով: Նույնիսկ այսպես կոչված «ամենաագրեսիվ» լրագրությունը վերը նշված ռանգի մարդկանց համար քիչ է: Սակայն մենք, մեր ամենօրյա գործունեությունը վկա, բոլորովին էլ այս կարգի՝ Հ1-ի ասած «ագրեսիվ», մեր ասած՝ ոչ պրոֆեսիոնալ լրագրության կողմնակիցը չենք, քանի որ սեռը սեռով հանելը ոչ միայն ժողովրդական ասացվածքում, այլեւ կյանքում չի բերում ցանկալի արդյունքի, կարելի է ասել՝ ընդհանրապես արդյունքի չի բերում: Կողմնակից չենք, որ գլխավոր խնդիրները վեր հանելը թողած՝ մամուլը եւ մեր կայքերը ամեն օր գրեն մականունավոր պատգամավորների ու պաշտոնյաների, նրանց հագած թանկարժեք կոստյումների, նրանց վարած թանկարժեք մեքենաների մասին, ու դա ընթերցելը դարձնեն ընթերցողի միակ զբաղմունքը՝ նշելով, որ դա՛ է նրա ուզածը, դա՛ է լավ կարդացվում: Սխալվում եք, դա նշանակում է արհամարհանք իսկական ընթերցողի հանդեպ, դա նշանակում է մարդկանց բթացում եւ զոմբիացում, որը գուցեեւ ինչ-որ մարդկանց պլանների մեջ մտնում է, քանի որ այդպես ինչ-որ նախագծողների կարծիքով մարդիկ (բայց ոչ իսկական ընթերցողը) կմոռանան իրենց խեղդող պրոբլեմները: Սակայն իսկական ընթերցողը մշտապես ծարավ է նորմալ խոսքի, մի բանի, որից կարող է սովորել, որը կարող է հոգու անկյուն լցնել, որը կօգնի չեզոքացնել իր շուրջը եղած ագրեսիան, կօգնի ապրել: Պատկերացրեք՝ դուք ամեն օր սնունդ ընդունելիս միայն կծու պղպեղ ուտեք. մի քանի օրից աղիքային խնդիրներ ու պաթոլոգիա կունենաք: Դե հիմա պատկերացրեք՝ բացում եք մամուլն ու կայքերը, հատկապես վերջինները ու գերակշռող են այնտեղ սպանությունը (ասենք՝ ամենավոր ահեղագործությունը), անարդարությունը, ամենավոր ագրեսիվ լրագրությունը, ամենավոր դանակն էլ հրավիրում է կարծես՝ ինքդ էլ սպանիր), բռնաբարությունները (ինքդ էլ գուցե փորձես), ինքնասպանությունները (սա եւս վարակիչ է՝ գիտականներն են ապացուցել): Հասկանո՞ւմ եք, խմբագիրներն ասում են՝ դա է կարդացվում, ու լցնում են, մեկը մեկից առաջ ընկնելով, ճանապարհին երբեմն չհասցնելով ճշտել, չհասցնելով մտածել՝ ամեն չճշտված լուրը ինչ ավեր կարող է գործել՝ նախ լուրի սուբյեկտի հարազատական շրջանակում, հետո հասարակության մեջ:

Թարմ օրինակներ՝ մարդը (Վանո Սիրադեղյանը) սիրված էր հերթել իր մահվան լուրը, նրա երեխաների, հարազատների, արյունակիցների տրավմայի մասին մտածելը հազարերորդ բան է երեւի: Կամ՝ ուրի կաթվածից մահացած Սուրեն Սիրունյանի դստեր՝ ինքնասպանության փորձ արած Դիանա Սիրունյանի վերաբերյալ առանց ճշտելու տեղեկության տարածմանն ի՞նչ անուն կարելի է տալ: Այս վերջինները, որոնց ոմանք ագրեսիա կարող են կոչել, մասնագիտության չիարգման դասական օրինակներ են:

Սակայն բոլոր դեպքերում միայն լրագրողներին եւ մեդիա ոլորտը մեղադրելու փորձերը նշանակում են ծառերի հետեւում անտառը չտեսնել, այն է՝ մեր ողջ հասարակությունում ամենատարբեր հանգամանքներով պայմանավորված հիվանդությունները չտեսնել: Լրագրողներին մի պահանջ կարելի է ներկայացնել՝ որ չգնան «Այդ է պահանջարկը» կարգախոսի եւ իր ադրուսը հոգալու հետեւից միայն, առանց խտրություն դնելու միջոցների մեջ, այլ, առաջիններից մեկը լինելով՝ լուրը ժամանակին եւ խղճով, ճշտված տալու հետ մեկտեղ՝ կամք ու հաստատակամություն դրսեւորեն ու սկսեն փոխել հասարակությանը, դրամ վաստակելուց առաջ սա է լրագրության կարգախոս: Իսկ սոսկ դրամ վաստակելու համար այլ մասնագիտություններ կան: Եվ գովազդատու կիսագրագետներին էլ հասկացնել, որ էս հասարակությունը իրենց բիզնեսի, այդ թվում՝ մեդիա բիզնեսի գերին չէ, ու չի կարելի դրամը լրատվական արկածախնդիրների եւ անգրագետների վրա ծախսել: Երբ մեր մեծահարուստները հասկանան, որ փողը պետք է ներդնել ոչ թե անգրագիտության, խժդժությունների, միմյանց դեմ կոմպրոմատներ պատվիրելու եւ այլ «սեւ» գործերի վրա, գուցե մի բան փոխվի: Իսկ առայժմ ունենք այն, ինչ ունենք: Եվ ո՛չ դատարանները, ո՛չ քարոզները, ո՛չ մեդիա կանոնների ցուցանումը չեն կարող շրջել իրերի դրությունը: Դեռ լավ է, որ դաշտում նաեւ բազմաթիվ պրոֆեսիոնալներ կան, որոնք ի վերջո մի հեղհեղուկ հավասարակշռություն ստեղծում են՝ իրացնում են եւ մարդկանց տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքը, եւ բարոյական նորմերը, խիղճը եւ մասնագիտական կանոնները չեն ոտնահարում: Իսկ այնպես՝ մեզ մոտ ամեն ինչ էլ կա, մանավանդ՝ խոսքի ազատություն:

ԱԶԳ

Հիշողության թելադրանքով

Ամեն լուսո առավոտ տաս հայցքն ուղղում էր երկնքի կապույտին, ձեռքերը վեր պարզում ու ինչ-որ բան էր մրմնջում: Հինգ-վեց տարեկան երեխա, անկողնում պառկած, ականջներս սրում էի, որ լսեմ, թե տաս այդպես ցածր ձայնով ի՞նչ է ասում: Մի օր էլ անկողնուց վեր կացա, ավելի մոտեցա ու պարզեցի, որ տաս աղիողորմ անիծում է.

- Թո՛ւրք, տունդ քանդվի, ինչպես որ դու մերը քանդեցիր...

- Թո՛ւրք, լավ օր չտեսնես...

Ժամանակը պատեց ինձ՝ թե իմ բարի, լավ տատիկը էս ի՞նչ է ասում:

Ամենօրյա այդ մրմնջոցից հետո մեր հարեւան Խանում տատն էր գալիս ու նորից ցածր ձայնով ֆչփչում, լաց լինում ու նորից անիծում ու անիծում էին: Ու այդպես գրեթե ամեն օր, ամեն լուսաբացին:

Նրանք ինձ ոչինչ չէին պատմում: Միայն մայրս մի օր ասաց, որ 1918 թվականին թուրքերը տատիս գյուղի բոլոր տղամարդկանց , այդ թվում եւ նրա նշանածին ու յոթ եղբայրներին, հավաքել եւ իրենց մոտակա Ձաջուռի ձորում գնդակահարել են: Իսկ մեր հարեւան Խանում տատն ավելի դաժան պատմություն ուներ: 1915-ին Մուշում ամբողջ գերդասանը կոտորել էին, իսկ նա ու փոքր տղան հրաշքով էին փրկվել եւ ոտաբոբիկ ու կիսամեռ հասել Արեւելյան Հայաստան: Ջնայած վաթսուն տարի է անցել, սակայն մինչեւ հիմա տեսնում եմ տատիս վեր պարզած ձեռքերը, իսկ ականջիս հնչում են նրա անեծքները:

Տարիներ անց, 1963-ին, երբ ընդունվեցի Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի բաժին, տատիս ճակատագրի նման ճակատագիր ունեցած շատ դասախոսներ կային: Նրանց խորհրդով սկսեցի փորփրել արխիվները: Այդ ժամանակ լույս տեսան նաեւ մեր ռեկտոր՝ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի, դասախոս՝ դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Մնացականյանի, եղեռնին վերաբերող փաստաթղթերի ժողովածուի ու հոդվածների հրապարակումները:

Այն, ինչ սփյուռքահայերը վաղուց գիտեին, մենք նոր-նոր էինք իմանում: Միջանկյալ ասեմ, որ, մեծ ռիսկի դիմելով, 1964 թվականին իմ համակուրսեցի Գեղամ Քյուրումյանի հետ համալսարանի մեր 2-րդ հանրակացարանում Եղեռնին նվիրված թռուցիկ տպագրեցինք: Ասելիքն այն էր, որ մենք ինքներս ճանաչենք Եղեռնը:

Արխիվային լուսանկարներն ու նյութերը, որոնք հիմա բոլորին են հայտնի, ուղղակի ցնցում էին մեզ: Խրուշչովյան ձնհալն ու տաք օդը խորհրդային փակի տակ դրված թուրքական ոճրագործության պատմությունը կամաց-կամաց ջրի երես էին հանում:

Երկրորդ անգամ ցնցում ու սարսուռ ապրեցի, երբ Ֆրանսիայից հայրենիք գաղթած կինոօպերատոր Սինե-Սեթոն 1969-ին միայն ինձ համար (այն ժամանակ ես «Ֆիլմ» թերթի խմբագիրն էի) Տերյան փողոցի հին «Հայֆիլմ»-ի դահլիճում, ուշ գիշերով առաջին անգամ ցուցադրեց Եղեռնի սարսափների մասին պատմող ժապավենները, որ նկարահանել էին գերմանացի օպերատորները: Ես շոկի մեջ էի, Դանթեի դժոխքը գլուխը քարով էր տվել: Սինե-Սեթոյին խնդրեցի, որ իր ժապավենները ցույց տանք նաեւ «Գարուն» ամսագրի խմբագիր Վարդգես Պետրոսյանին ու մտերիմ ընկերոջս՝ արձակագիր Ալեքսան Մեխակյանին:

Դիտումից հետո մի քանի րոպե երեքով քարացած, լռելյայն իրար երեսի էինք նայում: Միայն Վարդգես Պետրոսյանը սթափվելով ասաց.

- Ժապավենները լավ պահեք...

Լույս դառնաս, օպերատոր Սինե-Սեթո: 1946-ին՝ ահուվախի այդ մթրագործված դուրս կգաք այդ ցնցումից: Մինչեւ հիմա միլիարդներ ծախսելով կոծկել եք: Առաջինը կոծկել եք ձեր ժողովրդից: Ձեր ու մեր ասույթներում պարզ ու հասարակ մի ասացվածք կա՝ «Մախաթը պարկում չես կարող պահել»: Միլիոնավոր մարդկանց, կանանց, երեխաների, ծերերի արյան կանչն ու ոգին անհնար է տասնամյակներ ու հարյուրամյակներ շարունակ կոծկել, կեղծել ու թաքցնել:

Արեւելքի դրոշակակիր երկիր եք ուզում դառնալ: Ձեր նախնիների ոճրագործության այդ ծանր բեռով ո՞նց եք դառնալու: Մի՞թե գերմանացիների օրինակը ձեզ ոչինչ չի հուշում: Մ՞, չեք ուզում ոճրագործների սերունդ համարվել: Միեւնույնն է, մինչեւ «Կասարսիսի» (ինքնամթրման) շրջանը չանցնեք, չաղաչխարեք, ձեր նոր՝ կայսերապետական թափուն ցանկությունը սին պատրանք կմնա: Եվ ամեն ինչից երեւում է, որ դուք ձեր մարտավարությունն ու զինանոցը 21-րդ դարին համահունչ փոփոխության եք ենթարկում: Այն է՝ դեմոգրաֆիայի հաշվին՝ խաղաղ ճանապարհով տիրել չքեր Եվրոպային: Պատահական չէր վերջերս, պարոն Էրդողան, ձեր անմեղ թվացող այն կոչը, որ ամեն մի թուրք միջին հաշվով հինգ երեխա պիտի ունենա: Այսինքն՝ այն, ինչ զենքի ուժով չհաջողվեց անել ձեր նախնիներին, դուք իրականություն եք ուզում դարձնել խաղաղ ճանապարհով՝ քայլ առ քայլ: Իսկ եթե թվաբանական մի փոքրիկ հաշվարկ կատարենք, 70 միլիոնը բազմապատկենք հինգով, մոտ մեկ, երկու սերունդ հետո կես միլիարդի եք հասնում: Եվ, ինչպես ասում են, առանց կրակոցի Եվրոպան ձեր բռի մեջ է: Ի դեպ, այն Եվրոպան, որի լռելյայն համաձայնությամբ իր բնօրրանում ձեր նախնիները մի ամբողջ ժողովուրդ ոչնչացրին: Այդ առումով հայկական մի շատ լավ ասացվածք կա, որը ուղիղ եթերով Հենրիկ Իգիթյանը Միխայիլ Գորբաչովին ասաց: Կրկնել չեմ ուզում:

Այն էլ ասեմ, որ այդ նկրտումների հետ մեկտեղ չեք հրաժարվել նաեւ

Կոծկել, կեղծե՞լ, թե՞ ապաշխարել. սա է խնդիրը

Բաց նամակի փոխարեն

Օսմանյան կայսրությունում քննություն բռնած սրի քաշելու, յաթաղանի փորձված մեթոդից (որից ազատվելը գտնում եք, որ դեռեւս վաղ է) եւ դրա ամբողջ փորձն ու իմացությունը «Մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսով մեր հարեւաններին եք փոխանցել: Այստեղ «մտահոգություն» ունեմ, որ սխալվելու եք: Թերեւս, ինչպես ժամանակին, քրդական հարցում:

Ես համոզված եմ, որ վաղ թե ուշ հայերի ցեղասպանությունը ճանաչելու եք, որովհետեւ քաջ գիտեք, որ նոր քաղաքակրթություններ նվաճելու համար նոր զենք է պետք: Դա քաղաքակիրթ ազգ լինելը կամ նման տպավորություն թողնելն է: Ուրեմն որքան շուտ ճանաչեք GENOCIDE-ը, ձեր կայսերապատական նկրտումների համար, այնքան լավ: Դրանով իսկ հանգուցալուծում եք նաեւ համլետյան թնջուկի խնդիրը՝ կոծկել, կեղծել, թե՞ ապաշխարել...

Այս առումով ինքնամթրվելն ու ապաշխարելը Ձեր կայսերապետական նոպատակին հասնելու ճիշտ ուղին է...

ՌՈԲԵՐՏ ՄԱՔՈՍՅԱՆ
«+Կինո» ամսագրի խմբագիր

Խարբերդ. ուրվականների քաղաքն ու Գյավուրի գերեզմանը

Արեւմտյան Հայաստանի Մալաթիա քաղաքից մինչեւ պատմական Խարբերդ քաղաք հասնելու համար անհրաժեշտ է կտրել-անցնել ավելի քան երկու ժամվա ճանապարհ: Ճանապարհն անցնում է էլազիգ քաղաքով, եւ երբ Խարբերդի բարձունքից ներքեւ ես նայում, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Շուշիի բարձունքից Ստեփանակերտին ես նայում: Գրեթե միանման բնությունն ու աշխարհագրական նույն տեղանքը ապշեցնում են, հիացնում: Սակայն, ի տարբերություն Շուշիի, Խարբերդում հայկական շունչ չկա: Այստեղ դեռեւս թեւածում են հայ անմեղ նահատակների ոգիներն ու իրենց հոգու հանգստության համար պահանջում արդարություն, պահիժ ու հաստուցում...

Ժամանակին Խարբերդում գործում էին մի քանի վարժարաններ եւ մեկ քոլեջ: Քաղաքն ուներ երեք եկեղեցի եւ մի քանի մատուռ: Մեկ դար առաջ Խարբերդն արհեստագործության եւ առեւտրական կենտրոն էր: Քաղաքի հայ բնակչությունը զբաղվում էր արհեստներով, առեւտրով, երկրագործությամբ ու այգեգործությամբ: Այստեղ զարգացած էին շինարարական գործը, ջուլհակությունը, ներկարարությունը, կոշկակարությունն ու պղնձագործությունը: Առանձնահատուկ նշանակություն ունեին մետաքսագործությունը եւ գորգագործությունը:

1881 թ. Գրիգոր եւ Սարգիս Քյուրքճյան եղբայրներն այստեղ հիմնադրել են մետաքսի գործարան, որը 1896 թ. թուրքական իշխանությունները քարուքանդ են արել:

Ավելի զարգացած էր գորգագործությունը. գորգագործական ձեռնարկությունների թիվը հասնում էր ութի: Արտադրված հայկական գորգերը վաճառվում էին զանազան երկրներում: Դրանք արտահանվում էին հատկապես ԱՄՆ եւ եվրոպական երկրներ: 1908թ. Նյու Յորքում բացվում է Խարբերդի գորգերի հատուկ խանութ, որը մեծ համբավ էր վայելում:

Այսօր Խարբերդն ամայի մի վայր է՝ դաշտավայր՝ նման ուրվականների մեռյալ քաղաքի:

Այստեղ ընդամենը մի քանի տասնյակ քրդական տուն կա:

Գրեթե մեկ դար առաջ թուրքերն այնպես են այրել քաղաքն ու ավերել ամեն ինչ, որ անհնար էինք համարում այդ վառված քաղաքում հայկականի ու հայի մասին որեւէ, թեկուզ չնչին հետք գտնելը: Պարզվեց՝ շատպում էինք:

Խարբերդի «հուշարձան կոթողներից» մեկը, թերեւս ամենահայտնին, հայկական հետք ու թուրքական ցայտուն ատելություն ունի: «Գյավուր թաշեի», հայերեն թարգմանությամբ՝ գյավուրի, անհավատի քարը կամ գերեզմանը, որը գտնվում է Խարբերդի ժայռերից մեկի գլխին:

Տեղացիների հետ զրույցներից պարզվեց, որ սա այն վայրերից է, որ ամեն մի խարբերդցի գիտի, սակայն մինչ ուղղություն ցույց տալը նախ հետաքրքրվում են. «Իսկ ինչի՞ համար եք հարցնում»: Տեղացիներին թվում է, թե այցելուները եկել են գերեզմանը քանդելու եւ հայի պահած ոսկիները գողանալու:

«Գանձեր գտնելու հույսեր չփայփայեք, այնտեղ քարերի կույտից բացի ոչինչ չեք գտնի», ասում են նրանք ու շատպում ցույց տալ ճանապարհը:

Թե ինչ նախապատմություն ունի Գյավուր թաշը, գիտեն գրեթե բոլորը:

Ալիին հանդիպեցինք պատահաբար: Ութսունամյա ծերունուն զարմացրել էր զբոսաշրջիկների այցելությունն «իրենց քաղաք»: Նախ, նա հրավիրեց սուրճ խմելու, բայց երբ իմացավ, որ հայեր ենք, «ափսոսանքով» ձեռքերը թափահարեց ու ասաց. «Կներեք, տանը շաքարավազ չկա: Կինս ասում է, որ չենք կարող հյուրեր ընդունել»:

Նրա պատմելով՝ մեկ դար առաջ թուրքի եւ հայի միջեւ կռիվ է սկսվել: Հայն ու թուրքը մենամարտել եւ երկուսն էլ սպանվել են: Հային թաղել են սարի գլխին ու տեղանքն անվանել Գյավուր թաշ կամ Գյավուրի քար: Սարի գլխին գտնվող գերեզմանը քարերի մի կույտ է: Զգացվում է, որ տարիներ շարունակ գերեզմանը տեսել է տասնյակ ձեռքեր, բահեր, որոնք փնտրել են գանձեր:

Հայկական երկրորդ հետքը գտանք այսպես կոչված քաղաքի կենտրոնում: Հայկական եկեղեցի հիշեցնող կառույցի մի պատն ու հարեւանությամբ գտնվող փոքրիկ մատուռը կիսավեր վիճակում էին: Այդ եկեղեցիների վերաբերյալ որեւէ տեղեկություն գտնել չկարողացանք: Խարբերդցիներն այն անվանում են գոմի մի պատ, իսկ քանի որ ձորում է, ամբողջությամբ մատնվել է մոռացության:

Խարբերդում կոտորածները սկսվել են 1800-ականներին: Այդ ժամանակահատվածում 1000 հայ է գաղթել ԱՄՆ, 1895թ. կոտորածի ժամանակ 53 հայաբնակ գյուղերի հայությունը մասամբ կոտորվել է, մասամբ հավատափոխ արվել, կողոպտվել է 6023 ընտանիք, այրվել է 1861 տուն: Ըստ թուրքական աղբյուրների՝ 1915թ. այստեղից տարագրվել է 50024 հայ: Նրանց մի մասը բնակություն է հաստատել Արեւելյան Հայաստանում:

Մայրաքաղաք Երեւանի հարավարեւելյան կողմում 1929թ. հիմնադրվեց Նոր Խարբերդ ավանը: Ներկայիս քաղաքատիպ ավանի առաջին բնակիչները հիմնականում խարբերդցիներն էին:

ՀԱՍՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Խարբերդ, Արեւմտյան Հայաստան

ԱԶԳ

Միջազգային

Ադրբեջանի «կացնային» քարոզչությունը եւ իրականությունը

Ձինված ուժերում հնարավոր բարեփոխումների մասին ՀՀ ՊՆ մամլո խոսնակ **Արծրուն Հովհաննիսյանի** մեկնաբանությունը Բաքվում իսկական շփոթ է առաջացրել: Ադրբեջանի ԶԼՄ-ները, վստահաբար կարելի է ասել՝ սանձալով «պետպատվեր», միմյանց հերթ չտալով գրում են, որ «Հայաստանում դեմոգրաֆիկ ճգնաժամ է, պետությունը չի կարողանում կերակրել բանակը» եւ այլն, եւ այլն:

Այս ամենը տեղի է ունենում ադրբեջանական զինված ուժերում շարունակվող մարդային կորուստների ֆոնի վրա: Պաշտոնական տվյալներով, Ադրբեջանի զինված ուժերում տարեսկզբից զոհվել կամ «ինքնասպանություն է գործել» արդեն 61 զինծառայող: Երեւույթն այնքան է տարածված, որ անկախ փորձագետները ստիպված են շատ ցավալի ենթադրություններ անել: Մասնավորապես, ակնարկներ կան, որ «զոհված» զինվորների դիահերձման հետեւանքով վերջիններիս «օրգանները դառնում են առուծախի առարկա»:

Ավելի վաղ միջազգային մամուլի ուշադրության կենտրոնում էր հայտնվել Բաքվում մարդային օրգանների առուվաճառքի գործարքի մի «հսկայական մեխանիզմ», որտեղ պատվիրատուի դերում հանդես է գալիս իսրայելական կողմը: Աղօրինի վիրահատություններ իրականացնում է ազգությամբ թուրք վիրաբույժ, որի դեմ իր հայրենիքում քրեական հետաքննություն է հայտարարված: Ադրբեջանի առողջապահության նախարարությունն, իհարկե, «հերքել է» լուրերը: Այդուհանդերձ, մամուլը նշել է, որ նման վիրահատություններ կատարվում են Ադրբեջանի պետական նավթային ընկերության ենթակայության կլինիկայում, որը Բաքվում հայտնի է «նավթագործների հիվանդանոց» անունով:

«Զոհված» զինծառայողների օրգանները վաճառելու մասին խոսակցությունները, որ տարածված են ադրբեջանցի ծնողների շրջանում, այսպիսով, չի կարելի անհիմն համարել: Որոշ աղբյուրներ նույնիսկ ենթադրում են, որ «բանակում «դժբախտ պատահարների» հաճախականությունը սեւ բիզնեսի հետ ուղղակի կապ ունի»: Անկախ դրանից, զորակոչի ասպարեզում տիրող աղօրինությունների մասին է վկայում իշխանությունների քայլը. Ադրբեջանում զինկոմիսարիատները լուծարվել են, եւ գլխավոր շտաբին կից ստեղծվել է նոր կառույց:

Իշխանությունների վերահսկողությունից փիչ թե շատ ազատ լրատվամիջոցները տեղեկացնում են, որ «ռազմաճակատային զորամասեր չզորակոչվելու գինը տատանվում է 30-45 000 մանաթի սահմաններում»: Գործող «կարգի» համաձայն, մասնավորապես, Նախիջեւանից ոչ մի նորակոչիկ Ադրբեջանի այլ տարածաշրջան զինվորական ծառայության չի զորակոչվում: Նախիջեւանում տեղակայված զորամասն, այսպիսով, կատարում է այդ «ինքնավար հանրապետության» Գերագույն մեջլիսի նախագահ Վասիֆ Թալիբովի «անձնական գվարդիայի» դերը: Իրականում զինվորները «գրեթե ստրկական աշխատանք են կատարում Նախիջեւանի «խանին» պատկանող ագարակներում եւ շինհարթակներում»:

Անցած հունիսին Հայաստանի սահմաններում եւ ԼՂՀ զինված ուժերի հետ շփման գոտում ադրբեջանական բանակի դիվերսիոն խմբերի ձեռնարկած սանդրանքներին ի պատասխան հայկական կողմի ձեռնարկումների հետեւանքով հարեւան հանրապետությունում իրավիճակը սրվել էր այն աստիճան, որ ANS հեռուստաընկերության լրագրողուհին, երբ այցելել էր Գեռանբոյի շրջանի զորամասերից մեկը՝ տեսակցելու իր հարազատին, բարեխղճորեն արձանագրել էր, որ «Թափգարագոյունլու գյուղի բնակչության մեծամասնությունը հեռացել է»:

Ադրբեջանական զինված ուժերում տիրապետող իրավիճակի մասին դատողություններն, անշուշտ, հենված են միայն լրատվության բաց աղբյուրներից քաղված տեղեկությունների վրա: Նկատի ունենալով հարեւան երկրի ընդհանուր «փակ» համակարգը, որտեղ գրեթե ամեն ինչ որոշվում է Իլհամ Ալիեւի կողմից, պետք է ենթադրել, որ իրական պատկերն ավելի խայտառակ է: Եվ եթե Բաքվի քարոզչությունը մտասեւեռվել է ՀՀ ՊՆ խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի՝ մամուլի համար արված մեկնաբանություններին, ուրեմն Ադրբեջանում խիստ անհանգստացած են հավանականությունից, որ հայկական զինված ուժերը կարող են ավելի արհեստավարժ եւ մոբիլ դառնալ:

Թերեւս դա է պատճառը, որ Բաքվում սկսել են հաճախակի խոսել «պրոֆեսիոնալ բանակ ունենալու նպատակահարմարության» մասին: Բացառված չէ, որ Ադրբեջանի համար վերջին տարիների «խելագար ռազմական ծախսերը» դարձել են ֆինանսական եւ սոցիալական հսկա բեռ: Հակառակ դեպքում ադրբեջանցի՝ իրեն «անկախ տնտեսական վերլուծաբան» կոչող Իլգար Մամեդովը հրապարակային չէր խոսի այն մասին, թե «պրոֆեսիոնալ բանակ ունենալը եռակի կնվազեցնի ռազմական ծախսերը»:

Հայաստանի զինված ուժերի զորակոչային եւ այլ ռեսուրսների «քայքայման ադրբեջանական քարոզչության «փայլատակումները» հիշեցնում են խորհրդային մամուլի՝ «նեխող կապիտալիզմի» մասին հրապարակումները: Ոչինչ չես անի. մի երկիր, որ լիովին ժառանգել է «անփոխարինելի առաջնորդի» խորհրդային կարծրատիպը, քարոզչության բնագավառում չի կարող արդիական լինել: Որքան էլ լրագրողները փորձեն «յուրացնել» արեւմտյան մամուլի պրագմատիկ ոճը:

Վ. Ա.

Հարավամերիկյան երկրները պատշաճեցին Ասանժին ընդունելու էկվադորի որոշումը

Հարավամերիկյան ազգերի միությունը հավանություն է տալիս WikiLeaks կայքէջի հիմնադիր Ջուլիան Ասանժին քաղաքական ապաստան տրամադրելու էկվադորի իշխանությունների որոշումը: Այդ մասին ասվում է միության անդամ երկրների արտգործնախարարների հանդիպման վերջում ընդունված հայտարարության մեջ: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ ամփոփիչ փաստաթղթում հանդիպման մասնակիցների համերաշխություն են հայտնել էկվադորի իշխանություններին եւ կոչ են արել «երկխոսություն սկսել բոլոր կողմերին բավարարող լուծում գտնելու նպատակով»:

Էկվադորը օգոստոսի 16-ին որոշել էր քաղաքական ապաստան տրամադրել Ասանժին, որը Լոնդոնում արդեն 2 ամիս թաքնվում էր այդ երկրի դեսպանատան շենքում: Մեծ Բրիտանիայի իշխանությունները իրենց հերթին հայտարարել էին, թե Ասանժին թույլ չեն տա հեռանալ երկրից:

Հարավամերիկյան ազգերի միության մեջ մտնում է 12 երկիր, այդ թվում՝ Արգենտինան, Բոլիվիան, Բրազիլիան, Վենեսուելան, Կոլումբիան եւ Պերուն: Դիտորդներ են Մեքսիկան եւ Պանամա: Նախատեսվում է էկվադորի որոշումը քննարկման թեմա դարձնել նաեւ Ամերիկյան պետությունների կազմակերպության արտգործնախարարների արտահերթ նիստում: Այդ կազմակերպությունն ընդգրկում է Հյուսիսային եւ Հարավային Ամերիկաների 35 երկրներ: Հանդիպումը տեղի կունենա օգոստոսի 24-ին Վաշինգտոնում:

WikiLeaks կայքէջը մասնագիտացած է գաղտնի տեղեկությունների հրապարակման մեջ: Դրա հիմնադիր Ասանժին Մեծ Բրիտանիայում կալանքի տակ առան 2010-ի դեկտեմբերին Շվեդիայի իրավապահ մարմինների խնդրանքով: Շվեդիայում Ասանժը ամբաստանվում է սեռական ոտնձգությունների մեջ: Նրա փաստաբանները հայտարարում են, որ դատական գործը սարքված է քաղաքական շարժառիթներով եւ որ Շվեդիան մտադիր է արտանման դեպքում Ասանժին հանձնել ԱՄՆ-ին, որտեղ նրան մեղադրում են պետական գաղտնիքների հրապարակման մեջ:

ՄՈՍԿՎԱ

ՌԴ ԱԳՆ. «Արեւմուտքը զինում է սիրիական ընդդիմությանը»

Չեն մոռանում նաեւ Լիբիային վաճառված ռուսական զենքը

ՌԴ փոխարտգործնախարար Գենադի Գատիլովը երեկ հայտարարել է, որ Արեւմուտքի երկրները զենք են մատակարարում սիրիական ընդդիմությանը՝ ընդամին պահանջելով հակասիրիական պատժամիջոցների ձեռնարկում:

Գատիլովը Twitter-ում իր անձնական կայքէջում գրել է. «Ի հայտ են գալիս նորանոր փաստեր, այդ թվում՝ ԶԼՄ-ներում, որ սիրիական ընդդիմությանը զանգվածաբար արեւմտյան զինատեսակներ են մատակարարվում երրորդ երկրների միջոցով: Նման պայմաններում մեր արեւմտյան գործընկերներն ինչպե՞ս են պատկերացնում իրենց պահանջած հակասիրիական պատժամիջոցների երաշխավորված կատարումը»:

«Կոմերսանտ» թերթին հայտնի է դարձել սիրիական ընդդիմության զինամատակարարման եւս մեկ աղբյուր՝ Լիբիան: Սիրիացի գրոհայինները Լիբիայից ստանում են հրազեն եւ այլ զինատեսակներ, որոնք անցյալում Ռուսաստանը վաճառել էր Քադդաֆիի վարչակարգին: Այդ զինատեսակների մեջ կան մասնավորապես «Իգլա» շարժական զենիթահրթիռային համալիրներ:

Թերթը նշում է, որ այդ զենքը կարող է հայտնվել Բաշար Ասադի օտարերկրացի հակառակորդների՝ իսլամիստ ծայրահեղականների ձեռքին, որոնք Սիրիա են մեկնում ընդդիմադիրներին օգնելու:

Մյանմայի վերացրեց գրաքննությունը

Մյանման (նախկին Բիրմա) օգոստոսի 20-ից վերացրել է գրաքննությունը լրատվամիջոցներում: Ֆրանսպրեսը նշում է, որ մինչեւ վերջերս գրաքննության էին ենթարկվում ոչ միայն քաղաքական եւ կրոնական հրատարակությունները, այլեւ երգերի եւ մանկական հեքիաթների տեքստերը:

Երկրում գրաքննությունն իրականացնում էր 1988-ից իշխող զինվորական վարչակարգը: 2011 թ. մարտի 30-ից Մյանմայի նախագահի պաշտոնն զբաղեցնում է նախկին գեներալ Տեյն Սեյնը, որը ազատական բարեփոխումներ է իրականացնում: Դրանցից մեկն էլ գրաքննության վերացումն է:

Նոր նախագահի առաջին քայլերից մեկը դարձավ ընդդիմության առաջնորդ եւ խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Աուն Սան Սու Ջիի ազատումը 15 տարի տեւած տնային կալանքից: Նրա հետ մեկտեղ ազատ արձակվեցին հարյուրավոր քաղբանտարկյալներ, իսկ ինքը եւ մի քանի ուրիշ ընդդիմադիրներ դարձան պատգամավորներ:

2012-ի փետրվարին ԱՄՆ-ը վերացրեց Մյանմայի դեմ ուղղված պատժամիջոցների մի մասը: Հուլիսի 11-ին՝ 22 տարվա բացակայությունից հետո, ԱՄՆ դեսպանը վերադարձավ Մյանմա: 2012-ի ապրիլին Եվրոմիության երկրների արտգործնախարարները չեղյալ հայտարարեցին Մյանմայի դեմ ուղղված ֆինանսատնտեսական պատժամիջոցների մեծ մասը:

Deutsche Bank-ը կասկածվում է իրանական փողերի լվացման մեջ

ԱՄՆ դատախազությունը սուգումներ է սկսել Deutsche Bank-ի եւ մի քանի ուրիշ խոշոր բանկերի առնչությամբ, դրանց կասկածելով, ի խախտումն ԱՄՆ պատժամիջոցների, Իրանի հետ աղօրինաբար համագործակցելու մեջ: Այդ մասին հաղորդում է «Նյու Յորք թայմս» թերթը

Բանկը կասկածվում է մինչեւ 2008 թվականն ընկած ժամանակաշրջանում ԱՄՆ մասնաճյուղերում իրանական կոնտրագենտների անունից բազմամիլիարդ գործառնությունների կատարման մեջ: Deutsche Bank-ի ներկայացուցիչը հրաժարվել է մեկնաբանել սուգման փաստը, սակայն նշել է, որ դեռ 2007-ին բանկի ղեկավարությունը որոշել էր Իրանի, Սիրիայի, Սուդանի եւ Հյուսիսային Կորեայի կոնտրագենտների հետ նոր պայմանագրեր չկնքել, իսկ այդ պահին եղած պայմանավորվածությունները հնարավորինս սահմանափակել:

2009-ին ԱՄՆ իշխանությունները հետաքննություն էին սկսել օտարերկրյա 5 բանկերի գործունեության առնչությամբ, կասկածելով, որ դրանք իրանական փողեր են անցկացրել Ամերիկայում իրենց մասնաճյուղերի միջոցով: Կասկածի տակ էին հայտնվել ABN Amro, Barclays, Credit Suisse, Lloyds եւ ING բանկերը:

2012-ի օգոստոսի 14-ին իրանական ընկերությունների հետ անօրինական գործառնությունների մեջ մեղադրված բրիտանական Standard Chartered բանկը համաձայնեց 340 միլիոն դոլար տուգանք վճարել: Այսպիսով բանկը համաձայնագիր կնքեց Նյու Յորքի նահանգի ֆինանսական ծառայությունների վարչության հետ, որի շնորհիվ խուսափեց դատաքննությունից:

Երգարան՝ ազգային-հոգեւոր դաստիարակության

«Հայը եւ իր երգը»

«Փարիզում մեկը մոտեցավ ինձի՝ դուք Սիլվա Տեր-Ստեփանյա՞ն եք,- ըսավ: Ձեր ոտանավորները երգերի վերածեցի»: «Իրա՞վ,- մեծ ծրագրեր ունիմ՝ բոլոր տոնական օրերը երգերի վերածելու: Որովհետեւ ես ոգեշնչու�երգերով սորվեցնելուն կիավատամ», հիշում է Սիլվա Տեր-Ստեփանյանը՝ հայ երեխայի կրթության գործը, ազգային-հոգեւոր դաստիարակությունը մեր ապագայի շարունակության հիմը համարող մանկավարժը: Բազմաթիվ ուսումնական ու մեթոդական գրքերի հեղինակն ու մանկավարժական նորարարությունների ջատագովը ուշադրությունը հատկապես երեխայի հոգեբանության ճանաչողությանն է ուղղում, նրա անհատականության բացահայտմանը, զարգացմանը:

«Շեշտը կդնեմ հոգարության վրա, սակայն պարապ տեղը պետք չէ այդ հոգարությունը: Նախ պիտի հասկցնենք, ծանոթացնենք մեր արժեքները, սորվեցնենք: Փոքր տարիքեն երեխային պիտի մոտեցնենք ազգային, հոգեւոր արժեքներուն, հաճելի ձեւով, տրամաբանական ձեւով, շարունակությունը իրեն կմնա»: Այս մտայնությամբ է գործել ամերիկահայ մանկավարժը, հեղինակել տասնյակ դասագրքեր, Խրիմյան վարժարանը հիմնադրել Նյու Ջերսիում, որի ուսուցման մեթոդը արդեն 5-րդ տարին է կիրառվում է նաեւ Օշականում, իր նախաձեռնությամբ հիմնված առաջնորդարանին կից համանուն վարժարանում:

Փարիզում նրան մոտեցողը Կոմիտաս Գեւորգյանն էր, որի հետ հանդիպումը նոր ծրագրի իրականացման սկիզբն էր, որին հետեւում է իրագործումը՝ «Հայը եւ իր երգը» երգարանի հրատարակությամբ եւ որի վերահրատարակությունը արեւելահայերենով (փոխադրումը՝ Հասմիկ Աբրահամյանի) լույս տեսավ վերջերս, Մայր աթոռ Սբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի նախաձեռնությամբ եւ հովանավորությամբ: Երգարանը մեզանում իր տեսակի մեջ եզակի է եւ օգտակար երեխայի քրիստոնեական դաստիարակությանը եւ կրթությանը: Երգարանի տեքստերը, որ հեղինակել է Ս. Տեր-Ստեփանյանը եւ երաժշտությունը գրել Կոմիտաս Գեւորգյանը, վերաբերում են հայ եկեղեցական տոներին (Ճրագալույց, Տյառնընդառաջ, Ծաղկազարդ, Ս. Զատիկ, Համբարձում, Հոգեգալուստ, Վարդավառ, Աստվածածնի վերափոխում եւ այլն), հայոց պատմության նշանավոր դեմքերին ու դեպքերին, ազգային խորհրդանշան-արժեքներին (Արարատ, Զինանշան, Դրոշ) հայրենասիրությամբ ներշնչված ոտանավորներ են պարզ եւ բովանդակալից, որոնց ճանաչողական նշանակությունը բավականին մեծ է. երկու քառյականոց, փոքր ոտանավորների միջոցով հեղինակը նկարագրում է հայ եկեղեցու տոները, ծիսակատարությունները, փոխանցում ազգային լինելիության հիմնական պատվիրանները, դրանց նշանակությունը, խորհուրդը, որոնց ուսուցանումը երգեցողությամբ երեխայի համար անհամեմատ տպավորիչ է, մի բան, որ փոխանցում է հեղինակի մանկության հիշողությունը, ֆրանսիական դպրոցական կրթությունը. «Երբ տարեկանիս դպրոց տարավ մաման, այնպես սեղմեր էի ձեռքը, չէի ուզեր ձգեր: Դասարանը աղվոր զարդարված էր: Տեսա մայրապետը քարտեզը դրեր ու երգերով կսորվեցնե: Կամացուկ մոտս ձեռքը ձգեցի ու գացի մայրապետին փեշը բռնեցի»:

Հեղինակը գիրքը նվիրել է մոր՝ Ալիս Տեր-Ստեփանյանի հիշատակին: Առհասարակ նրա մտածողության կերպը, կյանքի նպատակն ու գործը ընտանեկան դաստիարակության արդյունքն է, դրա շարունակությունը՝ խորապես ազգային, հայկական: Դամասկոսում, իրենց ընտանեկան հարկի տակ միշտ հարգի է եղել հայ գիրն ու մշակույթը, մշտապես արթուն՝ ազգային-հոգեւոր կյանքը, հայերենը, հայ դպրոցն ու եկեղեցին կյանքն իմաստավորող միակ գոյություններն են թերեւս եղել: Սիլվայի՝ ակնթարթորեն փոխվող հայացքն ու ձայնի ելեւէջները մատնում են հոգեվիճակը՝ կարոտը հեռավոր մանկության, ընտանիքի, ծննդավայրի: Մայրը հիվանդ գամված էր անկողնում, երբ գրեց «Մայրիկիս» ձոնը՝ հավատով, որ առողջանալու է: «Պրոֆեսիոնա՞լ երաժիշտ էր ձեր մայրը»: «Պրոֆեսիոնալ մամա՛ էր: Բայց երաժշտություն շատ կսիրեր: Վեց տարեկանեն դաշնամուր, մանդոլին կնվագեր, մասնավոր հետաքրքրություն եւ բացառիկ զգացողություն ուներ երաժշտական»: Ընտանեկան մթնոլորտը, որտեղ ազգային ու հոգեւոր-եկեղեցական արժեքները հավասարապես ներկա էին, այն միջավայրն էր, այն լայսմոտիվը, որով ընթացավ հետագա կյանքը: Սիլվա Տեր-Ստեփանյանը դավանում է երեխայի հոգեկերտվածքի ձեւավորման ազգային-հոգեւոր դաստիարակության կերպին: Երգարանը այս ուղղությամբ կատարված իր բազմաթիվ աշխատանքներին հավելում է մի նոր երանգ. «Երաժշտին ըսի այնպիսի մեղեդի հորինի, որ խանդավառություն ստեղծի, ոչ շատ դանդաղ, ոչ շատ արագ՝ ռիթմիկ»: Այդ խանդավառությունը, ինչպես հավաստում են շատ մանկավարժներ, երգարանը արդեն ստեղծել է, այն օգտակար է հատկապես կրթարաններում ազգային-եկեղեցական տոների նշանավորման առիթներին:

Երգարանի՝ նոտագրումների եւ տեքստերի բովանդակության առաջին մասին հետեւում է հավելյալ երկու բաժին՝ առաջինում երգերի արեւմտահայերեն բնօրինակ տեքստերն են ընդգրկված, երկրորդում դրանց բովանդակության, խորհուրդների պարզ, հակիրճ, բայց սպառիչ տեղեկություններն ու մեկնաբանությունները:

Երգարանի գործածումը շահեկան ու գրավիչ է դարձնում Մայր աթոռի եւ ՀԲԸՄ Հայորդաց տների մանրանկարչության դպրոցի սաների աշխատանքների ձեւավորումը. մի շարք գործեր կատարման տեխնիկայով ու հասունությամբ զարմացնում են:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

Շիրակի գրողները կունենան սեփական տարածք

Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղը կունենա սեփական տարածք: Ինչպես «Արմենպրես»-ի թղթակցին տեղեկացրեց միության նախագահ **Անդրանիկ Կարապետյանը, սեպտեմբերին կիրականացվի հողի սեփականաշնորհման գործընթացը՝ գրողների միության մայր կառույցի ֆինանսական միջոցներով:**

Գյումրիի քաղաքապետարանն արդեն իրականացրել է տարածքի նախագծանախահաշվային աշխատանքները: Ըստ Անդրանիկ Կարապետյանի՝ շինարարական աշխատանքները կմեկնարկեն սեփականաշնորհման գործընթացից հետո: «Հուսով եմ, որ եթե ոչ մեկ, ապա երկու կամ երեք տարում այդ հարցը կլուծվի, իսկ մինչ այդ՝ մասնաճյուղը գուցե մեկ ուրիշ տեղում՝ քաղաքի ավելի կենտրոնական մասերում տեղակայվի, որպեսզի կարողանանք մեր աշխատանքներն ավելի արդյունավետ ծավալել»,- նշեց պատասխանատուն:

Ի դեպ՝ գրողների միության մարզային կառույցը երկար տարիներ գործում էր մի շինությունում, որի մասնավորեցումից հետո այն սիրված էր լքել տարածքը: Նոր՝ սեփականաշնորհվելիք տարածքը 200 քմ տարածք է զբաղեցնում եւ գտնվում է Ղուկասյան փողոցում:

Թոնի Սքոթը ինքնասպան է եղել

Ամերիկացի կինոռեժիսոր Թոնի Սքոթը, որն այլ կինոնկարների թվում նկարահանել է «Լավագույն հրաձիգը» («Top Gun») ֆիլմը, ինքնասպանությամբ վերջ է տվել կյանքին՝ Լոս Անջելեսի արվարձանում ցած նետվելով կամրջից: Այդ մասին, ինչպես տեղեկացնում է «Արմենպրես»-ը, օգոստոսի 20-ին հաղորդել է Reuters-ը՝ վկայակոչելով իրավապահ մարմինների ներկայացուցիչների: Սքոթը կիրակի օրը՝ տեղական ժամանակով կեսօրին մոտ, ցած է թռել Վինսենտ Թոմաս կամրջից:

Թոնի Սքոթը ծնվել է 1944 թվականի հունիսի 22-ին Մեծ Բրիտանիայում: Նրա եղբայրն է ռեժիսոր Ռիդլի Սքոթը: Սքոթը Հոլիվուդ է հրավիրվել 1980-ական թվականների սկզբին: Թոնի Սքոթի մյուս առավել հայտնի գործերի թվում են «Բոսորագույն մակընթացություն» (1995), «Պետության թշնամին» (1998), «Դոմինո» (2005) ֆիլմերը: Էկրաններին հայտնված Սքոթի վերջին գործը դարձել է «Անկառավարելին» (2010) ֆիլմը:

ԳՈՒՅԺ

Հայ կերպարվեստի կորուստը՝ Սամվել Պետրոսյան

Երկարատեւ հիվանդությունից հետո մահացավ գեղանկարիչ, արվեստի վաստակավոր գործիչ, վաստակաշատ մանկավարժ Սամվել Բարդուղի Պետրոսյանը: Սամվել Պետրոսյանի ընկերները, բարեկամները, ուսանողները կորցրեցին այնպիսի մի մարդու, որը հրաշալի ընկեր էր, հայր, խորհրդատու եւ գթասիրտ բոլորի հանդեպ: Սամվել Պետրոսյանին ճանաչողները երեկ կրկնում էին, որ նա անփոխարինելի անձնավորություն էր, նրանից շատերն են կյանքի դասեր վերցրել, ճանաչում ձեռք բերել: Իր կեսդարյա անբաժանելի ընկերոջ՝ Ս. Պետրոսյանի մասին **«Ազգը»** խնդրեց խոսք ասել գեղանկարիչ **Ռոբերտ Էլիբեկյանին**: «Ցավալի է, մեզ համար շատ ծանր կորուստ է Սամվել Պետրոսյանի մահը: Նա հրաշալի ընկեր էր, մտավորական, մեծ ավանդ ունեցող անհատականություն էր: Նա հետք թողեց հայ կերպարվեստի պատմության մեջ եւ այդ հետքը, ցավոք, հնարավոր չէ վերականգնել: Այսօր մեզ մնացին նրա գործերը, մի հարուստ ժառանգություն՝ հատկապես հայկական եկեղեցիներում նրա կատարած որմնանկարները վերջին տասը տարիներին: Բացի Երեւանից, նրա բազմաթիվ որմնանկարները, սրբապատկերները այսօր զարդարում են Լիբանանի, Կիպրոսի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Սիրիայի հայկական եկեղեցիները: Ցավոք, Սամվելը չհասցրեց տեսնել իր վերջին գործը՝ Մարիամ Աստվածածնի սրբապատկերը, որը պետք է զարդարի Մասիս քաղաքի Սբ. Աստվածածնի եկեղեցու խորանը»:

Իր ուսուցիչ, գեղանկարիչ Մկրտիչ Քամալյանից ստացած հմտությունները Սամվել Պետրոսյանը փոխանցեց իր ուսանողներին, դասավանդելով ու շուրջ երկու տասնամյակ ղեկավարելով Փ. Թերլեմեզյանի անվ. գեղարվեստի ուսումնարանը: Սամվել Պետրոսյանի տան դռները մշտապես բաց էին սաների առջեւ եւ դասաժամերը շարունակվում էին տանը՝ երաժշտության ներքո, ստեղծագործական մթնոլորտում: Նրա գրքերի ու ձայնագրությունների մեծ հավաքածուն դարձել էր ուսանողների ներշնչանքի աղբյուր ու սերմանել սերը մշակույթի ու արվեստի նկատմամբ: Վերջին 1,5 տարիները Սամվել Պետրոսյանը ամբողջովին նվիրվեց գեղանկարչությանը եւ ստեղծագործեց այնքան, որը հազիվ հնարավոր կլիներ 5-6 տարում իրականացնել: Կարծես զգում էր վաղաժամ հեռանալը կյանքից: Նա իր մեջ կուտակված ողջ մտքերը վրձնեց ու թողեց բարձրարժեք գործեր: Սամվել Պետրոսյանի կորուստը այսօր սգում են նրան ճանաչողները, հարազատները: **«Ազգը»** ցավակցում է Պետրոսյան գերդաստանին ու մաղթում համբերություն:

Սամվել Պետրոսյանի հոգեհանգիստը երեկ կայացավ Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցում: Վերջին հրաժեշտը տեղի կունենա այսօր, օգոստոսի 21-ին, Հայաստանի նկարիչների միությունում, ժամը 13-ից:

Մ. ՄԱՔԱԲՅԱՆ

Լույս է տեսել «Հնդկահայք-2011» տարեգիրքը



Օգոստոսին Կալկաթայում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ լույս տեսավ հնդկահայոց հոգեւոր հովվության եւ Հայոց մարդասիրական ճեմարանի «Հնդկահայք-2011» երկլեզու (հայերեն-անգլերեն) տարեգիրքը:

Տարեգրքի հիմնադիր-հրատարակիչն է հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ հոգեշնորհ Խորեն վարդապետ Հովհաննիսյանը, ով տարեգրքի իր ողջույնի խոսքում ընդառաջ գալիք հոբելյաններին՝ ի մասնավորի ասել է. «2012 թվականը համայն հայության կյանքում նշանավորվում է հայկական տպագրության սկզբնավորման 500-ամյակով: 2012 թվականը հնդկահայոց կյանքում նշանավորվում է Մադրասին նվիրված եւս երկու հոբելյաններով՝ Սուրբ Աստվածածին Հայաստանյայց առաքելական եկեղեցու՝ 300 եւ Մադրասում սկզբնավորված հայկական տպագրության 240-ամյակներով»:

Ջանասիրությամբ եւ խնամքով կազմված հանրագիտարանային այս պրակը հնդկահայոց տպագրության ավանդույթների շարունակությունն է եւ համապարփակ ներկայացնում է տարվա համայնքային անցուդարձն ու Մարդասիրական ճեմարանի գործունեությունը, ձեռքբերումներն ու առաջընթացը:

Հնդկահայության փառավոր եւ հարուստ պատմության մասին հոդվածներ պարունակող այն տարեգիրքը հրատարակվել է Կալկաթայի Սուրբ Նազարեթ Մայր եկեղեցու վարչության հովանավորությամբ:

Լեւոն Զուլֆալակյան. «Մեր ակնկալիքներն ավելի մեծ էին»

Երեկ «Հայելի» ակումբում կայացած մամուլի ասուլիսում Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի գլխավոր մարզիչ **Լեւոն Զուլֆալակյանն** անդրադարձավ օլիմպիական խաղերում մեր ըմբիշների ելույթներին: Նա նշեց, որ նախապես ծրագրել էին Լոնդոնում ներկայացուցիչ ունենալ բաային 6 կարգերում, սակայն միայն 4 ուղեգիր հաջողվեց նվաճել: Հույսերը չարդարացրին Ռոման Ամոյանն ու Արթուր Շահինյանը, որոնք չկարողացան ուղեգիր նվաճել:

Օլիմպիական խաղերում մեր ըմբիշների ելույթներից գլխավոր մարզիչն ընդհանուր առմամբ գոհ է, թեեւ, ըստ նրա, կարող էին ավելի լավ հանդես գալ: Զուլֆալակյանը նշեց, որ ոսկե մեդալի ակնկալիքներ ունեին Արսեն Զուլֆալակյանից ու Արթուր Ալեքսանյանից, սակայն ինչ-որ բան նրանց խանգարեց չեմպիոն հռչակվելու:

Մեդալի ակնկալիք կար նաեւ Յուրի Պasրիկեեւից: Առաջին գոտեմարտում նա բավականին դժվարին պայքարում հաղթեց օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Հասան Բարոեւին, որը նրա գլխավոր մրցակիցներից մեկն էր: Սակայն ժամանակը շատ կարճ էր ու Յուրին չհաստատեց ամբողջությամբ վերականգնել ուժերը:

Լեւոն Զուլֆալակյանը նշեց, որ վերջին 4 տարիներին Հայաստանի հունահռոմեական ըմբշամարտի հավաքականը միջազգային խոշոր մրցաշարերից մշտապես վերադարձել է մեդալներով: Բացի այդ, մեր հավաքականը վերջին տարիներին մշտապես մասնակցել է աշխարհի գավաթի խաղարկություններին, որոնցում հանդես են գալիս 10 լավագույն հավաքականները: Ընդ որում, վերջին 2 խաղարկություններում մեր ըմբիշները հավասար պայքարում զիջել էին միայն Ռուսաստանի եւ Իրանի հավաքականներին: Այնպես որ, Հայաստանի հունահռոմեական ոճի հավաքականն այսօր իրոք ուժեղագույններից մեկն է աշխարհում:

Զուլֆալակյանը նշեց, որ հաջորդ քառամյա ցիկլում պետք է ավելի լավ աշխատել, որպեսզի Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք օլիմպիական խաղերում ոսկե մեդալ ունենանք: Նա իր շնորհակալությունը հայտնեց ըմբշամարտի ֆեդերացիայից, ՀԱՕԿ-ից ու երկրի կառավարությունից՝ իրենց նկատմամբ ցուցաբերած հոգատար վերաբերմունքի համար: Հոկտեմբերին մեր հավաքականը կմասնակցի Եվրոպայի գավաթի խաղարկությանը, իսկ նոյեմբերին կանցկացվի Հայաստանի առաջնությունը:

Լոնդոնում բրոնզե մեդալ նվաճած **Արթուր Ալեքսանյանը** նշեց, որ դա էլ մեծ նվաճում է իր համար: Սակայն նա այնքան էլ գոհ չէ իր ելույթից եւ առանձնապես չի ուրախացել մրցանակակիր դառնալիս, քանի որ Լոնդոն էր մեկնել չեմպիոն հռչակվելու մտադրությամբ:

Մամուլի ասուլիսին ներկա միջազգային կարգի մրցավար **Գեւորգ Ալեքսանյանը** նշեց, որ Լոնդոնի օլիմպիական խաղերի ըմբշամարտի մրցումներում եղան մրցավարական որոշ սխալներ, սակայն բացառությամբ մեկ գոտեմարտի, դրանք չազդեցին մրցավարության ելքի վրա: Ըստ նրա, եթե համեմատելու լինենք աշխարհի գավաթի խաղարկության հետ, ապա լոնդոնյան մրցաշարը շատ լավ անցավ:

ՖՈՒՏԲՈԼ

Մխիթարյանի առաջին հեթ տրիկն Ուկրաինայում

Ուկրաինայի առաջնությունում իր արդյունավետ խաղն է շարունակում Հայաստանի ազգային հավաքականի եւ Դոնեցկի «Շախտյորի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը: Առաջնության 6-րդ տուրում «Շախտյորն» Օդեսայում 5-1 հաշվով ջախջախեց «Չեռնոմորեցին»: Արդեն 3-րդ րոպեին Հենրիխը բացեց հաշիվը, իսկ խաղավերջում եւս 2 գոլ խփելով, դարձավ հեթ տրիկի հեղինակ: Ուկրաինայում հանդես գալիս դա Մխիթարյանի առաջին հեթ տրիկն էր: Ժամանակին Մխիթարյանը նման հաջողության էր հասել նաեւ «Փյունիկում» ու Հայաստանի երիտասարդական հավաքականում: 6 տուրից հետո Մխիթարյանը 10 գոլով վստահորեն գլխավորում է Ուկրաինայի առաջնության լավագույն ռմբարկուների ցանկը:

Խաղից հետո Մխիթարյանն իր տպավորություններն է հայտնել. «Ամենադժվարն առաջին գոլն էր, որը մեզ վստահություն հաղորդեց: Առաջին խաղակեսն անցավ համառ պայքարում: Իսկ երբ ընդմիջումից հետո եւս 2 գոլ խփեցինք, «Չեռնոմորեցի» պաշտպանությունը ճանդվեց: Շնորհակալություն տղաներին, որ օգնեցին ինձ եւս 2 գոլ խփելու:

Ինձ համար ամենակարեւորը թիմային հաղթանակներն են: Շատ հաճելի է, որ ճանաչվել եմ ԱՊՀ-ի լավագույն ֆուտբոլիստ, ինչն ավելի է պարտավորեցնում: Դա նաեւ խաղընկերներիս արժանիքն է: Նրանք ինձ շատ են օգնում թե խաղադաշտում, թե դրանից դուրս: Մեկ ամսից մեկնարկում է չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարը: Շատ կարեւոր է պահպանել մեր այս լավ մարզավիճակը: Նպատակը նույնն է՝ առնվազն տեղ զբաղեցնել 16 ուժեղագույնների շարքում»:

«Շախտյորի» ավագ Դարիո Սռնան նշել է, որ Մխիթարյանն Ուկրաինայի առաջնության լավագույն ֆուտբոլիստն է:

Պասանի հայ շախմատիստներն առաջատարների թվում են

Չեխիայի մայրաքաղաք Պրահայում մեկնարկել է շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնությունը, որն անցկացվում է տարիքային 6 խմբով: Տարիքային 4 խմբերում Հայաստանի ներկայացուցիչները 3 տուրից հետո 100 տոկոսանոց արդյունքով գլխավորում են մրցաշարային աղյուսակը:

Մինչեւ 10 տարեկան տղաների մրցաշարում գերազանց է մեկնարկել Շանթ Սարգսյանը՝ հաղթելով Կիրիլ Գրիբչուկին, Նիկոլաոս Սերգեսսիդակիսին եւ Վաթնար Սթեֆանսոնին: Մեր շախմատիստի հետ եւս 12 մասնակիցներ վաստակել են 3-ական միավոր:

Մինչեւ 12 տարեկան տղաների մրցաշարում 3 անընդմեջ հաղթանակ է տոնել Հայկ Մարտիրոսյանը՝ պարտության մատնելով Արուլ Գուրգային, Մարիան Սանդուին եւ Ֆիլիպ Նովին: 3 միավոր ունի Արամ Հակոբյանը, որը հաղթել է Զեյմս Էվանսին, Ալեքսանդր Յուրովսկիխին ու Վլադիսլավ Լուկյանչուկին: 4-րդ տուրում Արամ Հակոբյանը կմրցի Հայկ Մարտիրոսյանի հետ: Տարիքային այս խմբում 3-ական միավոր ունեն 12 շախմատիստներ:

Մինչեւ 14 տարեկան տղաների մրցավեճում առաջատարներից մեկը Մանուել Պետրոսյանն է, որը հաղթել է Վսեւոլոդ Զուբկովին, Յան Պետրին եւ Գազոբլա Գարիգային: Առաջատարների թվում են 12 շախմատիստներ, որոնց 2,5 միավորով հետապնդում է Հրանտ Ալեքսանյանը:

Մինչեւ 16 տարեկան տղաների մրցաշարում էլ Տիգրան Հարությունյանն է առայժմ առանց միավորի կորուսի ընթանում: Նա հաղթել է Կագատաու Բուրչուին, Թադաս Վանագասին եւ Լուանիս Ստաշոպուլոսին: Տիգրանի հետ եւս 5 շախմատիստներ վաստակել են 3-ական միավոր:

Մինչեւ 18 տարեկան տղաների մրցաշարում Հովհաննես Գաբուզյանը 2,5 միավորով հետապնդում է աղյուսակը գլխավորող Վադիմ Մոիսեենկոյին ու Զաուր Մամադովին, որոնք 3 անընդմեջ հաղթանակ են տոնել: Գաբուզյանը հաղթել է Մարեկ Բրաունին ու Սաշա Անդրեեւին, ոչ-ոքի է խաղացել Ասաֆ Գիվոնի հետ:

Հայաստանը ներկայացնող 10 շախմատիստներից առայժմ բոլորից հաջող են խաղում Մարիամ Ավետիսյանն ու Մարիա Գեւորգյանը: Մարիամը մինչեւ 12 տարեկանների մրցաշարի առաջատարների թվում է, իսկ Մարիան հանդես է գալիս մինչեւ 18 տարեկանների մրցաշարում:

«Շիրակի» հաղթարշավը շարունակվում է

Ֆուտբոլի Հայաստանի առաջնությունում հաղթարշավն է շարունակում Գյումրիի «Շիրակը», որը 8-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Գյումրեցիները սեփական հարկի տակ 2-1 հաշվով պարտության մատնեցին «Փյունիկին»: Շիրակցիների կազմում արդյունավետ խաղով կրկին աչքի ընկան թիմի լեգեոնականներ Ֆոֆանա Բեկոն եւ Լամին Լի Յորոն, որոնց խփած գոլերի շնորհիվ էլ «Շիրակը» հաղթեց 2-1 հաշվով: «Փյունիկից» գոլի հեղինակ դարձավ Գոռ Մալաքյանը:

Վերը նշված լեգեոնականները մեծ ներդրում ունեն «Շիրակի» տոնած վերջին 8 հաղթանակներում՝ խփելով 7-ական գնդակ: Իսկ Լամին Լի Յորոն 9 գնդակով ընթացիկ առաջնության ամենաարդյունավետ լեգեոնականն է:

Առաջնությունում հեռակա կարգով շարունակվում է առաջին տեղի համար մրցավեճը «Միկայի» եւ «Շիրակի» միջեւ: «Միկան» 19-րդ տուրում հյուրընկալել էր «Բանանցին»: Այս խաղում «Միկայի» ֆուտբոլիստներին հաղթանակ պարգեւեց փոխարինման դուրս եկած Սեմյոն Մուրադյանը: Վերջինս դարձել է թիմի փրկիչը: 66-րդ րոպեին խաղադաշտ դուրս գալով, Մուրադյանն ընդամենը մեկ րոպե անց գրավեց «Բանանցի» դարպասը: Սեմյոն Մուրադյանը յուրօրինակ ռեկորդի հեղինակ է: Նա առաջնությունում խփած բոլոր 8 գոլերն էլ իր օգտին է գրանցել փոխարինման դուրս գալիս: Ընդ որում 5 խաղում դարձել է «Միկայի» խփած հաղթական գոլի հեղինակ:

Վերջին 2 տուրերում անհաջող է հանդես գալիս «Իմպուլսը»: Նախորդ տուրում դիլիջանցիները 1-2 հաշվով զիջել էին «Արարատին», իսկ հերթական խաղում Կաքանում խոշոր հաշվով (0-3) պարտվեցին «Գանձասարին»: Դաշտի տերերի կազմում գոլերի հեղինակներ դարձան Բենիամին Մանուչարյանը, Յամադոու Կեյտան ու Դումբիա Դիակարդիան:

Աբրահամ Խաչմանյանի գլխավորությամբ արարատցիները ճիգեր են գործադրում հեռանալու վերջին տեղից: Առայժմ դա նրանց չի հաջողվում, թեեւ նոր մարզչի որոշ «Արարատը» զգալիորեն կարգավորել է խաղը: 19-րդ տուրում արարատցիներն Աբովյանում 1-2 հաշվով զիջեցին «Ուլիսին»: Ընդ որում առաջինը հաջողության էր հասել «Արարատը», երբ 44-րդ րոպեին մրցակցի դարպասը գրավել էր Գեւորգ Նռանյանը: Սակայն 2-րդ խաղակեսում ուլիսցիներ Արագոնե դա Սիլվան եւ Շոթա Ջիքիան գրավեցին արարատցիների դարպասն ու աղահովեցին իրենց թիմի հաղթանակը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Միկա	19	14	2	3	34-19	44
2. Շիրակ	18	13	2	3	32-16	41
3. Իմպուլս	19	10	2	7	32-29	32
4. Գանձասար	18	8	4	6	22-15	28
5. Փյունիկ	18	8	3	7	36-26	27
6. Ուլիս	19	5	4	10	23-28	19
7. Բանանց	18	3	4	11	18-31	13
8. Արարատ	19	2	1	16	11-44	7

Ռմբարկուները

Նորայր Գյոզալյան	«Իմպուլս»	11
Վիուլեն Այվազյան	«Փյունիկ»	9
Լամին Լի Յորո	«Շիրակ»	9
Սեմյոն Մուրադյան	«Միկա»	9
Ֆոֆանա Բեկո	«Շիրակ»	8
Կամո Հովհաննիսյան	«Փյունիկ»	8

Հաղթեցին Իրանի հավաքականին

Armchess.am-ի տեղեկացմամբ, շախմատի Հայաստանի երիտասարդական հավաքականը Թեհրանում ընկերական մրցախաղ է անցկացրել Իրանի ազգային օլիմպիական ընտրանու հետ ու հաղթել է 34,5-15,5 հաշվով: Մեր հավաքականի կազմում մրցախաղին մասնակցել են Հրանտ Մելքումյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Արման Փաշիկյանը, Զավեն Անդրեասյանն ու Ավետիք Գրիգորյանը:

Փեդեռերի 5-րդ հաջողությունը Ցինցինատիում

Շվեյցարացի Ռոջեր Ֆեդեռերը 5-րդ անգամ հաղթող ճանաչվեց Ցինցինատիում անցկացված թենիսի մրցաշարում: Թենիսիստների համաշխարհային դասակարգման ցուցակի առաջատարը եզրափակիչում 6-0, 7-6 հաշվով պարտության մատնեց 2-րդ տեղում ընթացող Նովակ Զոկովիչին: Վերջինիս համար Ցինցինատիի եզրափակիչը 4-րդն էր եւ այս անգամ Զոկովիչը պարտված հեռացավ կորտից:

Փաշաջյանը կխաղա «Շիրակում»

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի նախկին ֆուտբոլիստ Լեւոն Փաշաջյանը մեկամյա պայմանագիր է կնքել Գյումրիի «Շիրակի» հետ: Հիշեցնենք, որ Փաշաջյանը նախորդ մրցաշրջանում հանդես էր գալիս Իրանի «Սանաթ նավթում»:

Հայաստանից՝ Դանիելյանն ու Մկրտչյանը

ՖԻԴԵ-Ն հրապարակել է նոյեմբերի 9-ին Ռուսաստանի խանտի Մանսիյսկ քաղաքում մեկնարկող շախմատի կանանց աշխարհի առաջնության մասնակիցների ցանկը: Նոկաուտ համակարգով անցկացվելիք այդ մրցաշարում Հայաստանը կներկայացնեն Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

Անսկզբունքային Ադրբեջան

Ամեն անգամ, երբ Բաքվում հայտնի է դառնում, որ օտարերկրյա քաղաքական գործիչ կամ լրագրող, վերլուծաբան է այցելել Արցախ, Ադրբեջանի ԱԳՆ-ն տարածում է մի սանդարս հաղորդագրություն. «Հայկական լրատվամիջոցների լուրի իսկությունը ստուգվում է, փաստը հաստատվելու դեպքում հիշյալ անձը կհամալրի մեր «սեւ ցուցակը» եւ կարգելվի նրա մուտքը մեր երկիր»:

Ո՞ւմ համար է նախատեսված այս էժանագին քարոզչությունը: Նախ, մարդիկ ամենեւին էլ դրանից չեն տուժում: Երկրորդ, Ադրբեջանն ինքը չի հարգում «պերսոնա նոն գրատա»-ի սկզբունքը: Միջազգային պրակտիկայում եթե անձը անցանկալի է որեւէ երկրի համար, ապա դա վերաբերում է ոչ միայն վերջինիս վիզա չտրամադրելուն, այլեւ առհասարակ նրա հետ շփումների սահմանափակմանը:

Ադրբեջանում, մինչդեռ, Լեռնային Ղարաբաղ այցելած անձանց հետ շփումները չեն սառեցվում: Ընդհակառակը, նրանք շատ հաճախ դառնում են Բաքվի լրատվամիջոցների կողմից փնտրված վիզավի: Խոսքը հատկապես վերաբերում է ռուսաստանցի քաղաքագետներին, վերլուծաբաններին: Անուններ առանձնացնելու կարիք, կարծում ենք, չկա: Այդ մարդիկ էլ իրենց գործն են անում:

Խնդիրն Ադրբեջանի անսկզբունքայնության մեջ է: Քանի որ եթե անձը անցանկալի է, ապա նրա մեկնաբանությունները, տեսակետը, կանխատեսումները չեն կարող այդ երկրում պահանջված լինել: Իսկ եթե դրանք պահանջված են, հակառակ դեպքում Բաքվի լրավամիջոցները դրանք չէին ներկայացնի, ուրեմն Ադրբեջանը շահագրգռված է, որ Լեռնային Ղարաբաղ ավելի շատ օտարերկրացիներ այցելեն: Այդ դեպքում Ադրբեջանի ԱԳՆ-ի «սեւ ցուցակն» ընդամենը ներքին օգտագործման ապրանք է: Եվ այն «արտադրվում է» ըստ «տեղական սպառողի» մակարդակի:

Իրականում պաշտոնական Բաքուն հասկանում է, որ «չինական պատի» միջոցով ժամանակակից աշխարհում անհնար է թաքցնել իրողությունները եւ, ըստ երեւույթին, լրատվական քաղաքականության միջոցով ձգտում է իր համար հնարավոր շահ քաղել՝ տեղեկատվություն քաղել ԼՂՀ տնտեսական, սոցիալական, քաղաքական եւ բարոյահոգեբանական իրավիճակի մասին: Այդ ձգտումը հասկանալի է: Բայց ինչո՞ւ դիմել միջնորդավորված աղբյուրներ: Դա էլ երեւի «սկզբունքի» հարց է:

Վ. Ա.

«Տարվա մարդ» մրցանակները Աֆշամին եւ Զարաֆոլուին

«Արմինյն միրոր-սփեթթեյթր» շաբաթաթերթը տեղեկացնում է, որ Նյու Յորք քաղաքի «Մարիոթ Դաունթաուն» հյուրանոցի հանդիսությունների դահլիճում հուլիսի 7-ին տեղի ունեցած Վարդանանց ասպետների մեծ օթյակի 94-րդ տարեկան հավաքի ավարտին միջազգային ճանաչման արժանացած ծագումով թուրք երկու գործիչներ՝ դոկտ. Թաներ Աֆշամը եւ Ռագիփ Զարաֆոլուն արժանացել են «Տարվա մարդ» մրցանակների:

Մոտ մեկ շաբաթ տեւած հավաքն անցել է Անդրանիկ Փլաչյանի նախագահությամբ: Ավարտական գալա-հանդիսությանը պատվավոր հյուրերի թվում են եղել Հայաստանյաց եկեղեցվո Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, ՄԱԿ-ում ՀՀ դեսպան Կարեն Նազարյանը իր տիկնոջ հետ, դոկտ. Թաներ Աֆշամը եւ Ռագիփ Զարաֆոլուի ներկայացուցիչ Ջեյմս Շերեֆ Հոլլեն: Երեկոյի ընթացքում 6 ուսանողների շնորհվել են կրթաթոշակներ, որից հետո դոկտ. **Դենիս Փափազյանը** ներկայացրել է տարվա մրցանակակիրներին:

Իր շնորհակալական ուղերձում դոկտ. Աֆշամը խոսել է այն դրական փոփոխության մասին, որ տեղի է ունենում Թուրքիայում, եւ եզրափակել իր ելույթը՝ ասելով. «Հայոց ցեղասպանությունը ոճրագործություն էր մարդկության պատմության մեջ, եւ ով չի կարողանում դատապարտել այն, բարոյական իրավունք չունի դատապարտելու ներկայիս կատարվող նման ոճրագործությունները: Մենք պետք է միասին աշխատենք եւ կատարենք այն ամենը, ինչն անհրաժեշտ է ոչ միայն կանխելու նմանատիպ արարքները, այլեւ ավելացնելու մարդկանց իրազեկվածությունը, որպեսզի ապագան ավելի լավը լինի ոչ միայն հայերի եւ թուրքերի, այլեւ ամբողջ մարդկության համար»:

Վերջում ներկաներին բաժանվել են օրինակներ Թաներ Աֆշամի «Երիտթուրքերի ոճրագործությունն ընդդեմ մարդկության» գրքից:

«Ազգի» առաջիկա համարներից մեկում կներկայացնենք Թ. Աֆշամի բացառիկ հարցազրույցը «Արմինյն միրոր-սփեթթեյթրին»:

Հ. Ծ.

Մարդ է սպանել նաեւ Օգյուն Սամասթի հորեղբոր որդին

1-ին էջից

Նա նույնպես մզկիթ էր եկել Ռամադանի տոնական նամազի առթիվ: Մզկիթից դուրս գալու պահին ատրճանակը գոտկատեղից հանել եւ սկսել է անիծանք կրակել, դառնալով սպանության պատճառ: Այնուհետեւ հանձնվել է ոստիկանություն, ասելով, թե տրաֆիզոնցիների մեջ ընդունված է մզկիթից դուրս գալուց կրակելը: Ոստիկանները մզկիթի բակում հայտնաբերել են տասնյակ պարկուճներ: Որքան էլ տրաֆիզոնցի թուրքերը կրակելու սովորություն ունենան, մզկիթն աղոթատեղի է, հետեւաբար ատրճանակը գոտկատեղին նամազի չեն գնում: Սակայն դա տրաֆիզոնցի թուրքերի, մասնավորապես Թուրհան Սամասթի խնդիրն է: Հետեւաբար մեզ հետաքրքրում է ոչ թե սովորությունը, այլ այս մարդասպանի եւս փառաբանման հավանականությունը:

Ինչպես հայտնի է, Հրանտ Դինքին սպանելուց հետո Սամսունի ավտոկայանում ձերբակալված Օգյուն Սամասթը երբ բերվեց Տրաֆիզոն, անվտանգության քաղաքային վարչության աշխատակիցները սրա ձեռքին տալով Թուրքիայի շատ փառապանծ դրոշը, թուրք ազգի այս մարդասպան զավակին հերոսացրել էին եւ լուսանկարվել սրա հետ, որպեսզի հավերժացնեն անմոռանալի պահը: Այնուհետեւ օրեր, շաբաթներ, ամիսներ շարունակ թուրք ֆուտբոլասերները մարզադաշտերում «Մենք բոլորս Օգյուն Սամասթ ենք» բացականչություններով իրենց հիացմունքն էին արտահայտել այս ստոր մարդասպանին, որ հայ էր սպանել:

Վերջին անգամ այդ հիացմունքն արտահայտվեց այս տարվա փետրվարի 26-ին Ստամբուլում, երբ վարչապետ Էրդողանի կառավարությունը «Բոլորդ հայ եք, բոլորդ վիժվածք» կարգախոսով հանրահավաք կազմակերպեց, որպեսզի ոգեկոչի Խոջալուի այսպես կոչված կոտորածի զոհերին: Հանրահավաքին մասնակցող թուրք-ադրբեջանական վիժվածքների ոհմակը սպիտակ բերետ էր կրում, ինչպես Օգյուն Սամասթ կոչեցյալ մարդասպանն էր կրել Դինքին սպանելու պահին: Թուրհան Սամասթը ոչ միայն Օգյունի հորեղբոր որդին է, այլեւ նույնպես մարդասպան: Պարզապես հայ չի սպանել: Եթե հայ սպանած լիներ, շատ փառապանծ թուրք ազգի զգոն զավակները կփառաբանեին նաեւ սրան: Չէ՞ որ սրանք մարդասպանների նկատմամբ հարգանքի ընդգծված հակում ունեն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության դատախազության անվտանգության ապահովման վարչության պետի տեղակալի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի

/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

Դատախազության տեղեկատվական համակարգերի ենթակառուցվածքի (տեղեկատվական հոսքերի և շտեմարանների ամբողջության , տեղեկատվական տեխնոլոգիաների ու տեղեկատվական գործունեությանը վերաբերող ժամանակակից մեթոդների ու միջոցների կիրառման ապահովում, անվտանգության ապահովման և հեռահաղորդակցության ոլորտի նախագծային փաստաթղթերը, տեղեկատվական համակարգի և դրա աշխատանքի համար անհրաժեշտ ծախսերի ցուցակների նախապատրաստում, դատախազությունում համակարգչային տեխնոլոգիաների օգտագործման և զարգացման հայեցակարգերի մշակում, վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների նախապատրաստում, ինչպես նաև օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորությունների իրականացում:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

1) բարձրագույն իրավաբանական կամ այլ մասնագիտական (եթե աշխատանքի բնույթը իրավաբանական չէ) կրթություն, 2) դատախազության աշխատակազմում պետական ծառայության կամ այլ պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա սաժ կամ առնվազն երեք տարվա դատախազության աշխատակազմում պետական ծառայության սաժ կամ դատախազության աշխատակազմում պետական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային սաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային սաժ, 3) «Դատախազության մասին», «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. հունիսի 20-ի «ՀՀ դատախազության կանոնակարգը սահմանելու մասին» N 59 հրամանի, «ՀՀ դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև ունի տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 4) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչ պես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում, 5) ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, 6) համակարգչով և ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն, 7) հայերենի պատշաճ իմացություն, 8) առնվազն մեկ օտար լեզվի (ազատ) տիրապետում:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «03» սեպտեմբերի 2012թ.:

Մրցույթն անցկացվելու է 2012թ. սեպտեմբերի 20-ին ժամը «11:00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երևան, Վ.Սարգսյան 5/ :

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երևան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից անվտանգության սարքավորումներ ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու նպատակով անվտանգության սարքավորումներ ձեռքբերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձիք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձիք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2012թ. հոկտեմբերի 02-ի ժամը 16:00-ն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2012թ. հոկտեմբերի 02-ի ժամը 16:00-ն:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2012թ. հոկտեմբերի 05-ին ժամը 16-00-ին:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է՝

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձր է:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (**www.cba.am**): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. **59-28-02,59-28-05**, ներքին՝ **18-02, 18-05**:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Սույն հայտարարության մեջ նշված բաց ընթացակարգի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի քաղաքապետարանի՝ ոռոգման նպատակով Գեսիկ գետից 8 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձիք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2012 թ. օգոստոսի 27-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ բնապահպանության նախարարություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Էյ-ի-Ջի Սերվիս» ՍՊ ընկերության կողմից ՀՀ Լոռու մարզի «Լոռի-Զրմուղ կոյուղի» ՓԲԸ պատկանող «Ծովասար» եւ «Սպիտակ ջուր» ջրագծերի վրա ՓՀԷԿ-եր կառուցելու նպատակով նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձիք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2012 թ. օգոստոսի 27-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ բնապահպանության նախարարություն

ԳՈՎԱԶԳԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 20.8.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: